

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ
ԵՎ ԳԵՆԵՏԻԿԱ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ
ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ 2013

(Զեկույցը քննարկվել է և հաստատվել ԵՊՀ
կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2013թ. ապրիլի 25-ին կայացած նիստի թիվ 8 որոշմամբ)



ԵՐԵՎԱՆ 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՓԱՍՏԵՐ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍԻՆ.....	3
ՉԱՓԱՆԻՇ 1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ.....	5
ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.1.....	5
ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.2.....	6
ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.3.....	7
ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.4.....	9
ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.5.....	11
ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.6.....	13
ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.7.....	14
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ.....	15
ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....	15
ՉԱՓԱՆԻՇ 2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ.....	16
ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.1.....	16
ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.2.....	17
ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.3.....	19
ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.4.....	21
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ.....	22
ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....	22
ՉԱՓԱՆԻՇ 3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	24
ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.1.....	24
ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.2.....	28
ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.3.....	30
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ.....	32
ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....	33
ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	34
ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.1.....	34
ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.3.....	34
ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.2.....	36
ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.4.....	38
ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.5.....	38
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ.....	40
ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....	40

ՉԱՓԱՆԻՇ 5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....	42
ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.1.....	42
ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.2.....	46
ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.3.....	47
ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.4.....	48
ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ.....	50
ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....	50
ՉԱՓԱՆԻՇ 6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ.....	51
ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.1.....	51
ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.2.....	53
ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.3.....	54
ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ.....	55
ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....	56
ՉԱՓԱՆԻՇ 7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ.....	57
ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.1.....	57
ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.2.....	58
ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.3.....	60
ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.4.	60
ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.5.	60
ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ.....	62
ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ).....	63
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	64
ՀԱՎԵԼՎԱԾ 1.....	65
ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	79
ՀԱՎԵԼՎԱԾ 3.....	93
ՀԱՎԵԼՎԱԾ 4.....	95

ՓԱՍՏԵՐ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը հիմնադրվել է 1933 թվականին: Ֆակուլտետը Հայաստանում կենսաբանության տարբեր բնագավառների զծով որակյալ մասնագետների պատրաստման հիմնական գիտակրթական կենտրոնն է: Ներկայումս ֆակուլտետի կառուցվածքի մեջ մտնում է 8 ամբիոն: Դրանք են՝ բուսաբանության, կենդանաբանության, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի, էկոլոգիայի և բնության պահպանության, մանրէաբանության և բույսերի ու մանրէների կենսատեխնոլոգիայի, գենետիկայի և բջջաբանության, կենսաքիմիայի, կենսաֆիզիկայի ամբիոնները:

Յուրաքանչյուր ամբիոնին կից գործում են գիտահետազոտական խմբեր, որոնք ներառված են գիտահետազոտական հինգ լաբորատորիաների մեջ (“Ընդհանուր կենսաբանության”, “Ազոտ պարունակող միացությունների կենսաքիմիայի”, “Մսկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի”, “Ենթաբջջային կառուցվածքների կենսաֆիզիկայի” և ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի հետ համատեղ՝ “Կառուցվածքային կենսաֆիզիկայի” գ/հ լաբորատորիաները): Բացի նշվածից, ֆակուլտետում գործում են նաև պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ չորս թեմաներ: Այսպիսով, ֆակուլտետի գիտական հաստիքների քանակն անցնում է 100-ից: Այս առումով ֆակուլտետը համալսարանի 19 ֆակուլտետների մեջ առաջնակարգ տեղ է գրավում:

Կենսաբանության ֆակուլտետի գիտակրթական պատշաճ մակարդակի, գիտական մեծ ներուժի վկայությունն է ներկայիս պատկառելի պրոֆեսորադասախոսական անձնակազմը (ՀՀ ԳԱԱ երկու ակադեմիկոս, երեք թղթակից անդամներ, գիտությունների 22 դոկտոր և ավելի քան 100 թեկնածուներ): Ֆակուլտետի գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները վերաբերում են մոլեկուլային և բջջային կենսաբանության, մոլեկուլային կենսաֆիզիկայի, թաղանթների կենսաֆիզիկայի, համեմատական և էվոլյուցիոն կենսաքիմիայի, բույսերի կենսաքիմիայի, բուսաբանության և սնկաբանության, մանրէաբանության, մանրէների և բույսերի կենսատեխնոլոգիայի, մարդու մոլեկուլային գենետիկայի և բջջագենետիկայի, կենդանաբանության և հյուսվածաբանության, մարդու և կենդանիների բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի, հոգեֆիզիոլոգիայի, կենսացենոզների էկոլոգիայի, կենսաբազմազանության ուսումնասիրման և պահպանության, և բնապահպանության տարբեր բնագավառներին: Ֆակուլտետի շրջանավարտներից շատերը միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ են, հաջողությամբ աշխատել և աշխատում են նախկին Խորհրդային Միության և հեռավոր արտասահմանյան երկրների գիտական կենտրոններում: Ֆակուլտետի ճանաչված մասնագետները գիտահետազոտական համագործակցության մեջ են արտասահմանյան մի շարք երկրների (ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Ռուսաստան և այլն) գիտական կենտրոնների մասնագետների հետ, բազմիցս հանդես են եկել դասախոսություններով, գիտական զեկույցներով:

Կենսաբանության ֆակուլտետում, ինչպես և ամբողջ համալսարանում, ներկայումս ուսուցումը տարվում է եռաստիճան համակարգով՝ բակալավրիատ (4 տարի ժամկետով),

մագիստրատուրա (2 տարի) և ասպիրանտուրա (3 կամ 4 տարի՝ կախված ուսուցման ձևից՝ առկա, թե հեռակա): Այն իրականացվում է չորս մասնագիտությունների գծով՝ կենսաբանություն, կենսաքիմիա, կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա: Վերջինս 21-րդ դարի կենսաբանության արդի և արագ զարգացող բնագավառներից է:

Ներկայումս ֆակուլտետն ունի 600-ից ավելի ուսանողներ, նրանցից մոտ 500-ը՝ բակալավրիատի ուսանողներ են, (առկա և հեռակա ուսուցմամբ) 120-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ:

Բակալավրիատի համակարգում ուսանողներին տրվող տեսական գիտելիքները ամրապնդվում են Հրազդանի Մարմարիկ ուսանողական հանգրվանում անցկացվող դաշտային, ինչպես նաև ֆակուլտետի ամբիոններում կազմակերպվող փորձարարական պրակտիկաների ընթացքում: Բակալավրիատի ավարտական կուրսում կազմակերպվում է նաև մանկավարժական պրակտիկա Երևան քաղաքի դպրոցներում:

Ֆակուլտետ ընդունվելու համար երեք մասնագիտությունների գծով («կենսաբանություն», «կենսաքիմիա» և «կենսաֆիզիկա») դիմորդները պարտադիր պետք է հանձնեն կենսաբանություն առարկայից քննություն: Երկրորդ քննությունը կամընտրական է՝ ֆիզիկա կամ քիմիա, իսկ «կենսաինֆորմատիկա» մասնագիտության համար՝ կենսաբանություն, ֆիզիկա, մաթեմատիկա երեք առարկաներից ցանկացած երկուսը, դիմորդի ընտրությամբ:

Մագիստրատուրայի համակարգում ֆակուլտետը մասնագետներ է պատրաստում 9 մասնագիտացումների գծով (բուսաբանություն, կենդանաբանություն, զենետիկա, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա, կենսատեխնոլոգիա, էկոլոգիա, ընդհանուր և բժշկական կենսաքիմիա, կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա): Անցյալ ուսումնական տարում բացվեց նաև մագիստրոսական մեկ ծրագիր հեռակա բաժնում (կիրառական կենսաբանություն):

ՉԱՓԱՆԻՇ 1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մասնագիտության կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև ՄՈՒՀ-ի առաքելությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.1.

ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին:

Որակյալ կրթությունը ԵՊՀ ռազմավարական գլխավոր նպատակներից է: Այն արտացոլված է ԵՊՀ 2010-2014 թթ.զարգացման ռազմավարական ծրագրում: ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կրթական ծրագրերի առաջարկվող ցանկը համահունչ է իր առաքելությամբ սահմանված գերակա ուղղություններին, որոնք ներառում են նաև բնական գիտությունները:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Գենսաբանություն* մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրի նպատակն է պատրաստել բուսաբանության և սնկաբանության, կենդանաբանության, գենետիկայի և բջջաբանության, ֆիզիոլոգիայի, էկոլոգիայի և բնության պահպանության, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառներում հիմնարար գիտելիքներով և հմտություններով օժտված մասնագետներ: *Գենետիկա* մասնագիտացմամբ մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է խոր մասնագիտական գիտելիքներ հաղորդել գենետիկայի հիմնարար և կիրառական ասպարեզներում, պատրաստել գիտական ուսումնասիրություններ կատարելու ունակ մասնագետներ, որոնք իրենց տեսական, և գործնական հմտություններով կբավարարեն աշխատաշուկայի ժամանակակից պահանջները, ունակ կլինեն գործնականում կիրառելու կենսաբանության ժամանակակից մեթոդները, իրականացնելու մանկավարժական գործունեություն դպրոցներում և բարձրագույն մասնագիտական հաստատություններում, դեկավարելու գիտական և գիտակրթական ծրագրեր: Վերը նշված կրթական ծրագրերի նպատակները համապատասխանում են ԵՊՀ հիմնական առաքելությանը՝ գիտելիքի ստեղծում, փոխանցում և տարածում: Այդ նպատակները համահունչ են ԵՊՀ առաքելության հիմնադրույթներից նրան, որտեղ սահմանվում է, որ՝ *«ԵՊՀ գործունեության գերակա նպատակներից են՝ հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունների ու մշակույթի զարգացումը և տարբեր ուղղություններով հիմնարար հետազոտությունների կատարումը»:*

Հարկ է նշել նաև, որ կենսաբանության ֆակուլտետի թե բակալավրի, և թե մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի ծրագրերը գիտակրթական ծրագրեր են, որոնք ուսանողներին հնարավորություն են ընձեռում ընդգրկվելու ֆակուլտետի գիտահետազոտական հինգ լաբորատորիաների («Ընդհանուր կենսաբանության»», «Ազոտ պարունակող միացությունների կենսաքիմիայի»», «Սնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի»», «Ենթաբջջային կառուցվածքների կենսաֆիզիկայի»» և ԵՊՀ

Ֆիզիկայի ֆակուլտետի հետ համատեղ գործող «Կառուցվածքային կենսաֆիզիկայի»>> լաբորատորիաները) բազային և դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրերում: Այս հանգամանքը նույնպես համահունչ է համալսարանի՝ որպես գիտահետազոտական հաստատության առաքելությանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.2.

ՄԿԾ-ն հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս:

Մասնագիտական կրթական ծրագրերի պլանավորումը և ռեսուրսների բաշխումը ներառված են ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրերում և ներառում են ինչպես կրթական ռեսուրսների (այդ թվում՝ մարդկային), այնպես էլ նյութական ռեսուրսների բաշխումը: Հանդիսանալով ԵՊՀ կրթական ծրագրեր կենսաբանության ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի ծրագրերը համալսարանի ներքին պլանավորման և ռեսուրսների հատկացման գործընթացների կարևորագույն մասն են կազմում: Յուրաքանչյուր ուստարվա ավարտին ԵՊՀ-ն պլանավորում է հաջորդ ուստարում կենսաբանության ֆակուլտետի բակալավրի և մագիստրատուրայի, ինչպես նաև ասպիրանտուրայի կրթական մակարդակներում իրականացվող ծրագրերի ընդունելության չափաքանակները՝ առկա և հեռակա ուսուցման ձևերում, վերլուծելով նախորդ տարիների ընդունելության ցուցանիշները: Այդպիսով, կատարվում է ընդունելության պլանավորում ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և մասնագիտությունների՝ հաշվի առնելով մասնագիտությունների կանխատեսվող պահանջարկը և դրանց իրականացման համար անհրաժեշտ առկա ներուժը՝ դասախոսական, նյութատեխնիկական և ֆինանսական: Կենսաբանության ֆակուլտետի բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ուսումնական բեռնվածությունների հաշվարկն և դրանց հիման վրա համապատասխան հաստիքների տրամադրումը հանդիսանում են ԵՊՀ-ի ներքին պլանավորման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Բացի այդ կենսաբանության ֆակուլտետի համար հաշվարկվում են մեկ ուսումնական տարվա ընթացքում կրթական ծրագրերի նյութատեխնիկական բազան ապահովելունուղղված անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Սակայն հարկ է նշել, որ ներկայումս կենսաբանության ֆակուլտետում տարվող որոշ դասընթացների արդյունավետ իրականացման համար միշտ չէ, որ առկա նյութատեխնիկական ռեսուրսներն ունեն բավարար մակարդակ: Դա պայմանավորված է կենսաբանության բնագավառի բուռն զարգացման և համալսարանի նյութատեխնիկական բազայի հազեցման արագությունների անհամապատասխանությամբ: Սակայն, այս ուղղությամբ ԵՊՀ ևս միջոցառումներ է ձեռնարկում: Այսպես, “ԵՊՀ բնագիտական ֆակուլտետների ուսումնական լաբորատորիաները 2010-2012 թթ-ին նոր սարքերով և սարքավորումներով վերազինելու ծրագրի” շրջանակներում ԵՊՀ-ն բավարար ռեսուրսներ է հատկացրել նաև կենսաբանության ֆակուլտետին: Նման և այլ գործողությունները ներառված են ԵՊՀ զարգացման ռազմավարական պլանի Խնդիր I. դ) 5-րդ կետում՝ “Ապահովել ուսումնական ենթակառուցվածքների հետագա բարելավումն ու արդիականացումը, դրանց միջև կապերի ամրապնդումը, որակյալ դասավանդման մեթոդական հենքի, տեխնոլոգիական ռեսուրսների, այդ թվում՝ տեխնոլոգիական կարողությամբ լսարանների ցանցի զարգացումը”:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.3.

ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է՝ ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների:

Կենսաբանության ֆակուլտետի *Գենետիկա* մագիստրոսական ծրագրով ուսուցումը կրեդիտային համակարգով կազմակերպվել է հիմք ընդունելով ԵՊՀ Գիտական խորհրդի կողմից 2007թ. փետրվարի 2-ի № 1 որոշմամբ հաստատված “Երևանի պետական համալսարանում մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը” մեթոդական փաստաթուղթը: *Գենետիկա* մասնագիտացմամբ մագիստրոսական ծրագիրը, ինչպես նաև ֆակուլտետում գործող մյուս կրթական մագիստրոսական ծրագրերը վերանայվեցին՝ ուղենիշ ունենալով դրանց մոդուլացումը և դրանց արտահայտումը ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածության համապատասխանող կրեդիտային միավորներով: *Գենետիկա* մասնագիտացմամբ մագիստրոսական կրթական ծրագիրը մշակվել է ըստ վերոնշյալ մեթոդական փաստաթղթում առկա մագիստրոսական ծրագրին ներկայացվող պահանջների և ապահովում է ուսանողների մոտ ԵՊՀ մագիստրոսի որակավորմանը համապատասխանող պահանջների ձևավորում:

Մագիստրոսական ծրագրի կատարման արդյունքում ուսանողը ուսման երկու տարիների ընթացքում պետք է լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն: Մագիստրոսի կրթական ծրագիրը կազմված է ընդհանուր կրթամասից (6 կրեդիտ), մասնագիտական պարտադիր և կամընտրական կրթամասերից (66 կրեդիտ), ինչպես նաև հետազոտական կառուցամասից (48 կրեդիտ, որից 12 կրեդիտը հատկացվում է մագիստրոսական թեզի կատարմանը) (Հավելված 2):

Կենսաբանության ֆակուլտետի բակալավրի *Կենսաբանություն* ծրագրով ուսուցումը կրեդիտային համակարգով կազմակերպվել է՝ հիմք ընդունելով ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2007թ. դեկտեմբերի 27-ի № 4-07/08 որոշմամբ հաստատված “Կրեդիտային համակարգով բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը” մեթոդական փաստաթուղթը:

2008/2009 ուստարվանից սկսած կենսաբանության բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ուսանողը ծրագրի կատարման չորս տարվա արդյունքում պետք է լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն: Ծրագիրը ներառում է հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (36 կրեդիտ), մաթեմատիկական և բնագիտական (10 կրեդիտ), ընդհանուր մասնագիտական (170 կրեդիտ) և հատուկ մասնագիտական (24 կրեդիտ) կրթամասերը (Հավելված 1) : *Կենսաբանություն* կրթական ծրագրով ուսուցումն ապահովում է նաև ուսանողների մոտ ԵՊՀ բակալավրի որակավորմանը ներկայացվող պահանջներին համապատասխան հմտությունների և կարողությունների ձևավորում:

2008/2009 ուստարվանից սկսած կենսաբանության ֆակուլտետում ներդրվել է *Կենսաբանություն* մասնագիտությամբ բակալավրի հեռակա ուսուցմամբ ծրագիրը, որը մշակվել է հիմք ընդունելով “Երևանի պետական համալսարանում հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը” (հաստատված ԵՊՀ գիտական խորհրդի 2009թ. հունիսի 18-ի թիվ 5 նիստում) մեթոդական

փաստաթուղթը:

Եվ բակալավրի, և մագիստրոսի կրթական աստիճաններում *Կենսաբանություն* մասնագիտության և *Գենետիկա* մասնագիտացման համար սահմանված կրթական վերջնարդյունքները (գիտելիք և իմացություն, կարողություններ և հմտություններ) արտահայտվեցին բոլոր ուսանողներին տրամադրվող համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածում (տե՛ս Հավելված 3, կենսաբանության ֆակուլտետի մագիստրոսի և բակալավրի դիպլոմի հավելվածի 4.2 կետը):

2011/2012 ուստարվանից սկսած ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի վերը նշված երկու ծրագրերը վերամշակվեցին և սահմանվեցին կոմպետենցիաների վրա հիմնված կրթական վերջնարդյունքներ՝ հիմք ընդունելով «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշները»(հաստատված ԵՊՀ գիտխորհրդի կողմից՝ 2010թ. հոկտեմբերի 8-ին, №6/1 որոշմամբ): Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանվեցին ծրագրի նպատակները, ձևակերպվեցին հստակ կրթական վերջնարդյունքները, ուսումնական մոդուլի կրթական վերջնարդյունքները, հստակեցվեց նշված կրթական վերջնարդյունքներն ապահովելու համար դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդների ընտրությունը, արդյունքում մշակվեց ուսումնական պլանի քարտեզը: Վերոհիշյալը արտացոլված է բակալավրի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերի մասնագրերում (Հավելվածներ 1 և 2):

Ուսումնական պլանի քարտեզումներկայացված է կրթական ծրագրերի բովանդակության և կրթական վերջնարդյունքների կապը: Այստեղ ցույց է տրվում, թե ո՞ր կրթական վերջնարդյունքը, ո՞ր դասընթացի (կամ դասընթացների խմբի) օգնությամբ է ձևավորվում: Սա էական նշանակություն ունի կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ծրագրեր մշակելիս:

Սակայն հարկ է նշել, որ չնայած ստեղծված մեթոդաբանական հենքին կենսաբանության ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարները և ինչպես նաև դասախոսական կազմը ունեն նակրացուցիչ վերապատրաստումների կարիք, ինչը կարող էր առավել արդյունավետ և բեղմնավոր դարձնել ծրագրերի գործնական մշակումը և հետագա իրականացումը: Նրանց կողմից հաճախ բավարար չափով հաշվի չեն առնվում կրթական վերջնարդյունքների ձևակերպման համար անհրաժեշտ աշխատաշուկայի պահանջները: Առկա բացերը լրացնելու համար սկսած 2011/2012 ուստարվանից կազմակերպվում են բաց դռների օրեր և սեմինարներ, կրթական ծրագրերի համատեղ մշակման աշխատանքներ արտադրության ներկայացուցիչների մասնակցությամբ: Միաժամանակ ԵՊՀ-ն պատրաստվում է համալսարանի վարչական անձնակազմի, ֆակուլտետների դասախոսական անձնակազմի (այդ թվում՝ կենսաբանության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի համար) կազմակերպել համապատասխան ուսուցում, ինչը նկարագրված է ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի 3-րդ չափանիշում: Միաժամանակ, հարկ է նշել նաև այն, որ համալսարանն այս ուղղությամբ կատարել է որոշակի քայլեր, դասախոսների վերապատրաստման ծրագրում ներառելով հատուկ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են դասախոսների մոտ կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերի մշակման, ինչպես նաև համապատասխան ուսուցման, դասավանդման

և գնահատման մեթոդների կիրառման հմտությունների զարգացմանը:

Իրականացվող աշխատանքների արդյունավետությունը որոշվելու է շրջանավարտների վերաբերյալ գործատուների հարցումների, ինչպես նաև կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ արդեն իսկ իրականացվող հարցումների վերլուծություններով, կրթական ծրագրերի սպասվող վերջնարդյունքների շրջանավարտների կողմից ձեռք բերման գնահատմամբ, որն իրականացվում է ավարտական ատեստացիայով:

ՉԱՓՈՂՈՇԻՉ 1.4.

ՄԿԾ-ն համապատասխանում է ՈԱՇ-ին, մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշիին:

Կենսաբանության ֆակուլտետի բակալավրի և մագիստրատուրայի մակարդակում ներկայում դասավանդվող կրթական ծրագրերը անցել են բարեփոխումների երկար շղթա՝ համալսարանական մակարդակում տեղի ունեցող բարեփոխումներին համահունչ, որոնք մանրամասնորեն նկարագրված են ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի 3րդ չափանիշի, 3.1. չափորոշիչում:

Կենսաբանության ֆակուլտետում հնգամյա կրթական ծրագրերը 1995/1996 ուստարում բաժանվեցին բակալավրի և մագիստրոսի որակավորումներով երկաստիճան կրթական համակարգի: Սակայն համապատասխան կրթական վերջնարդյունքներ չձևակերպվեցին: Արդյունքում, մագիստրատուրայում ուսուցումը որոշ չափով կրկնում էր բակալավրի ծրագրի բովանդակությունը, քանի որ հստակ ձևակերպված չէին բակալավրի և մագիստրոսի որակավորումների ելքային բնութագրիչները և աշխատաշուկայի պահանջներին նրանց համապատասխանությունը:

Ինչպես նշվել է նախորդ չափորոշիչում և ինստիտուցիոնալ հավատարմագրման 3-րդ չափանիշում 2006թ-ին ԵՊՀ գիտական խորհուրդը հաստատեց "Երևանի պետական համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույցը", որը նախատեսում էր աստիճանական անցում կրեդիտային հենքով ուսումնառության կազմակերպմանը նախ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերում՝ 2007/2008 ուստարվանից, ապա 2008/2009-ից՝ բակալավրի կրթական ծրագրերում:

ԵՊՀ կրթական ծրագրերի տրամաբանական արժանահավատությունն ապահովելու նպատակով դրանց մշակման համար հիմք ընդունվեցին ՀՀ պետական կրթական չափորոշիչները, ինչպես նաև Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) որակավորումների շրջանակը (դուրլինյան նկարագրիչները), որոնք որպես պահանջ սահմանված են նաև ԵՊՀ Գիտխորհրդի կողմից հաստատված "ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներում" (2010թ.), որտեղ առկա է կրթական վերջնարդյունքների հիմքով ծրագրերի վերափոխման պահանջը: Սահմանված պահանջներին համապատասխան կենսաբանության ֆակուլտետում մշակվեցին երկու պիլոտային ծրագրեր՝

- TEMPUS ծրագրի շրջանակներում 2010թ. "Կիրառական կենսաբանություն" մագիստրոսական ծրագիրը,

- Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2011թ-ին "Կենսաինֆորմատիկա" բակալավրի ծրագիրը:

Վերոնշյալ մեթոդական հենքի և արդեն մշակված պիլոտային ծրագրերի փորձի հիման վրա վերափոխվեցին ԵՊՀ *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերը:

Անհրաժեշտ է նշել, որ կենսաբանության ֆակուլտետի կրթական ծրագրերի վերամշակման համար հիմք հանդիսացան ոչ միայն ՀՀ պետական կրթական չափորոշիչները, Բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը, այլ նաև այլ ծրագրային կողմնորոշիչներ: Դրան թվում են, մասնավորապես՝

- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակը ԵԲԿՏ (դուրլինյան նկարագրիչները),
- Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակը (6-րդ և 7-րդ մակարդակներ),
- Արտասահմանյան առաջավոր համալսարանների համանման ծրագրերը և այլ աղբյուրներ (օրինակ, տարբեր երկրների առարկայական բենչմարկները), որոնք նկարագրված են չափորոշիչ 1.5.:

Հարկ է նշել, որ որակավորումների ազգային շրջանակը և բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները բավարար հիմքեր չեն տրամադրում կոնկրետ առարկայական ոլորտում տրամաբանորեն կառուցված բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մշակման համար: Այդ իսկ պատճառով կիրառվում են նաև ծրագրային այլ կողմնորոշիչներ:

Կենսաբանություն բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերի կետ 16 և 17-ում ներկայացված են կիրառված համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչները, որոնց հիման վրա նաև մշակվել է բակալավրիատի և մագիստրատուրայի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ցանկը:

Հարկ է նշել, որ կրթական ծրագրերով շնորհվող որակավորումները համապատասխանեցված են Դուրլինյան նկարագրիչների և Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակի պահանջներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.5.

ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է, համահունչ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրի հետ և նպաստում է ուսանողներին ոլորտային կազմի շարժունությանը և միջազգայնացմանը:

Ինչպես արդեն նշվել է չափորոշիչ 1.1-ի վերլուծության բաժնում, կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերը վերանայվել են, որի արդյունքում ստեղծվել է տրամաբանական կապ կրթական ծրագրերի նպատակների (պրոֆիլի) և ակնկալվող կոմպետենցիաների կրթական վերջնարդյունքների և կարիերայի հնարավորությունների միջև: Ծրագրի կրթական վերջնարդյունքների տրամաբանական վերաձուլը կոնկրետ բովանդակության, ապահովվում է յուրաքանչյուր ծրագրի համար մշակված ուսումնական պլանի քարտեզով, որը յուրաքանչյուր կրթական վերջնարդյունք կապակցում է վերջինիս ձևավորող դասընթաց(ներ)ի կամ ուսումնական մոդուլ(ներ)ի հետ:

Կենսաբանության ֆակուլտետի և՛ բակալավրի, և՛ մագիստրոսի կրթական ծրագրերը մշակելիս հիմք են ընդունվել ակնկալվող կրթական վերջնարդյունքները (կոմպետենցիաները): Վերջիններս սահմանվել են՝ հաշվի առնելով ինչպես ազգային, այնպես էլ միջազգային պահանջները բակալավրի և մագիստրոսի որակավորումների համար (որակավորումների եվրոպական և ազգային շրջանակները): Մյուս կողմից, ինչպես արդեն նշվել է, համալսարանն արդեն ներդրել է շարժունության և ուսումնառության արդյունքների ճանաչման այնպիսի գործիքներ, ինչպիսիք են ECTS կրեդիտային համակարգը և համաեվրոպական ձևաչափի դիպլոմի հավելվածը (Diploma Supplement), որոնք արդյունավետորեն կիրառվում են նաև կենսաբանության ֆակուլտետի վերոնշյալ ծրագրերում:

ԵՊՀ բակալավրիատի և մագիստրատուրայի վերոնշյալ ծրագրերի բովանդակային առումով կատարելագործմանը խիստ նպաստել են Եվրոպական մի շարք համալսարանների հետ համագործակցությունը, դրանց համանման ծրագրերի և ծրագրային կողմնորոշիչների ուսումնասիրումը, փորձի փոխանակումը, ինչպես նաև համատեղ ծրագրերի իրականացումը:

1. Այսպես TEMPUS ծրագրի շրջանակներում 2010թ. Մշակված՝ Կիրառական կենսաբանություն՝ մագիստրոսական ծրագիրը խթանել է նաև բակալավրի Կենսաբանություն՝ կրթական ծրագրերի բովանդակային կատարելագործումը:

2. Եվ բակալավրի, և մագիստրատուրայի առանձին մոդուլներ լրամշակվել են տարբեր համալսարանների հետ համատեղ իրականացվող միջազգային ծրագրերի շրջանակներում: Այսպես օրինակ GIZ Agrobiodiversity sustainable managment ծրագրի շրջանակներում միջազգային փորձագետների հետ համատեղ լրամշակվել են կենսաբանություն բակալավրի կրթական ծրագրի էկոլոգիայի և բնության պահպանություն ընդհանուր դասընթացը, ինչպես նաև մի շարք մասնագիտական դասընթացներ:

3. Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2011թ-ին կենսաբանության ֆակուլտետում մշակվել է Բակալավրի նոր “Կենսաինֆորմատիկա” կրթական ծրագիրը:

4. Գերմանիայի Botanischer Garden und Botanisches Museum-Berlin Dahlem Freie University-ի հետ համատեղ կնքված համաձայնագրի (Նոյեմբեր 8, 2009 մինչև 2014) շրջանակներում լրամշակվել են բուսաբանության դասավանդմանը վերաբերող հատուկ մասնագիտական կրթամասերը:

Ստորև, որպես օրինակ, ներկայացվում են ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի Բակալավրի *Կենսաբանություն* ծրագրի կրթական վերջնարդյունքների ցանկի մշակման համար օգտագործված առաջատար համալսարանների կենսաբանության ծրագրային համապատասխան կրթական չափորոշիչները և ծրագրային այլ կողմնորոշիչները.

1. Պետական կրթական չափորոշիչ “Կենսաբանություն” մասնագիտությամբ,
2. Biosciences 2007. The Quality Assurance Agency for Higher Education 2007, UK;
3. Criteria for Accrediting Engineering Programs Effective for Evaluations During the 2010-2011 Accreditation Cycle Incorporates all changes approved by the ABET Board of Directors as of October 31, 2009;
4. The framework for higher education qualifications in England, Wales and Northern Ireland, 2008.

Սակայն պետք է նշել, որ մինչ օրս *Կենսաբանություն* Բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ուսումնական ծրագրերում առկա են շատ փոքրածավալ դասընթացներ (ուսումնական մոդուլներ): Ընդ որում, դրանք, որոշ կրթական բլոկերում միմյանց հետ տրամբանորեն շաղկապված չեն: Ներկայումս կենսաբանության ֆակուլտետում նման մոդուլների տրամաբանական միավորման և շաղկապման ուղղությամբ արդեն իսկ տարվում են որոշակի աշխատանքներ: Այսպես, ՏԵՄՊՈՒՍ ծրագրի շրջանակներում մշակված կիրառական կենսաբանություն մագիստրոսական ծրագրի կրթական մոդուլները միավորված են ըստ ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձևավորման պահանջների և հետապնդում են առարկաների միջև առաջացող բացերը լրացնելու նպատակ: Նման փորձը, թույլ է տալիս կատարելու որոշակի շտկումներ *Կենսաբանություն* Բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերը բովանդակային առումով վերանայելու և բարելավելու ուղղությամբ:

Բակալավրի և մագիստրոսի կրթական վերջնարդյունքների (կոմպետենցիաների) և եվրոպական ծրագրային կողմնորոշիչների հենքի վրա կառուցված ծրագրերը, որոնք բավարարում են Բակալավրի և մագիստրոսի որակավորումներին եվրոպական և ազգային շրջանակների կողմից ներկայացվող պահանջներին, նպաստում են ուսանողների շարժունությանն ու կրթական գործունեության միջազգայնացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.6.

ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները.

Ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների արդյունավետ ձեռքբերման համար անհրաժեշտ է համարժեք դասավանդման և ուսումնառության մեթոդների առկայություն:

ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետի ուսանողների գիտելիքների գնահատումը, ինչպես նաև ուսանողական հարցումների արդյունքները անհրաժեշտություն առաջացրեցին վերանայելու դասավանդման և ուսումնառության կիրառվող փորձը և ներդնելու այնպիսի մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել ուսանողների կողմից ակնկալվող կրթական վերջնարդյունքների արդյունավետ ձեռքբերումը: Կրթական ծրագրերի մասնագրերում առանձին բաժին է հատկացված ծրագրերի կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների նկարագրմանը: Այստեղ տարբերակված ձևով ներկայացվում են մասնագիտական տեսական գիտելիքները, մասնագիտական գործնական կարողությունները և ընդհանրական (փոխանցելի) կարողությունները, ինչպես նաև վերջնարդյունքների ձեռքբերման համար ընտրված համապատասխան դասավանդման և/կամ ուսումնառության մեթոդներ: Մասնագրում ներկայացված յուրաքանչյուր կրթական վերջնարդյունքի կամ դրանց խմբի համար ներկայացվում են դասավանդման և ուսումնառության համապատասխան մեթոդները (տե՛ս Հավելված 1 և 2): Սակայն հարկ է նշել, որ դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդները միշտ չէ, որ նպաստում են ուսանողների կողմից դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների արդյունավետ ձեռքբերմանը: Այդ նպատակով կենսաբանության ֆակուլտետի դասախոսները անցնում են վերապատրաստումներ՝ ուղղված ժամանակակից դասավանդման և ուսումնառության հմտությունների զարգացմանը:

Կենսաբանության ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառվող դասավանդման մեթոդների արդյունավետությունը մասամբ գնահատվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտին անցկացվող դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական անանուն հարցումների միջոցով: Այս հարցումները թույլ են տալիս պատկերացում կազմել այն մասին, թե որքանով են ընտրված կրթական վերջնարդյունքները բավարարում ուսանողների պահանջները:

Կենսաբանության ֆակուլտետի և բակալավրի, և մագիստրատուրայի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, ինչպես նաև շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքները (5 բալանոց գնահատման սանդղակում՝ միջինում 4 միավոր և ավելի) վկայում են, որ ընտրված կրթական վերջնարդյունքները և դրանց հասնելու ճանապարհներն ընդհանուր առմամբ բավարարում են ուսանողների պահանջները: Միաժամանակ պետք է նշել, որ կենսաբանության ֆակուլտետում թեև գլխավոր շահակիցների՝ գործատուների հետ պարբերաբար քննարկվում են առանձին շրջանավարտների կոմպետենցիաները և գործատուների բավարարվածությունը, սակայն դրանք համընդհանուր բնույթ չեն կրում և փաստաթղթավորված չեն: Այս խնդիրները ներառված են կրթական ծրագրերի

պարբերական վերանայման և մշտադիտարկան կարգերում, և սկսած 2012/2013թթ ուսումնական տարվանից, վերլուծվելու և փաստաթղթավորվելու են նաև շահեկիցների բավարարվածությանը վերաբերող տվյալներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.7.

Առկա են հասակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը:

Կենսաբանության ֆակուլտետի, ինչպես և ԵՊՀ այլ ֆակուլտետների կրթական ծրագրերի մշակման ընթացքում ստեղծվող ծրագրերի հասարակական կարծիքը չի ուսումնասիրվել, դրանք չեն անցել ներքին կամ արտաքին փորձաքննություն, չեն եղել դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը գնահատող մեխանիզմներ և ամենակարևորը՝ բացակայել են ծրագրերի շարունակական բարելավման մեխանիզմները: Քիչ չեն այն դեպքերը, երբ ծրագրերը կազմելիս և դասընթացների կազմն ընտրելիս առավելապես հաշվի էր առնվում առկա պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական հնարավորությունները, և ոչ թե ծրագրերի կրթական վերջնարդյունքներով պայմանավորված բովանդակության ապահովումը:

Սակայն 2012/2013թթ ուստարվանից սկսած կենսաբանության ֆակուլտետի վերոնշյալ կրթական ծրագրերը համապատասխան վերանայումներից հետո անցան պաշտոնական հաստատման նոր գործընթաց համաձայն 2011թ-ի փետրվարի 24-ի, թիվ 2 նիստում հաստատված "ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման" կարգի պահանջների:

2012/2013թթ ուստարվանից սկսած ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը որակի ապահովման և շարունակական բարելավման, ինչպես նաև աշխատաշուկայի կարիքներին համապատասխանության ու հասարակական պահանջարկվածության գնահատման նպատակով անցնելու են ընթացիկ մշտադիտարկում և վերանայում ըստ ԵՊՀ գիտխորհուրդի 2011թ-ի հունիսի 2-ի, թիվ 6 նիստի որոշմամբ ընդունված «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգի»:

Հարկ է նշել, որ այս գործընթացը իրականացվում է ֆակուլտետային մակարդակում ստեղծված Որակի ապահովման հանձնաժողովի ակտիվ մասնակցությամբ: Վերոնշյալ գործընթացներն արդյունավետ կերպով իրագործելու համար ԵՊՀ-ն պլանավորում է կազմակերպել ֆակուլտետների Որակի ապահովման հանձնաժողովների ղեկավարների և ղեկանների տեղակալների ուսուցում, ինչը ներառված է Համաշխարհային բանկի "ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում" դրամաշնորհային ծրագրի աշխատանքային պլանում (Խնդիր 2, գործողություն 2.4, 2.5 և 2.6):

Քանի որ կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնական ծրագրերը կենսաբանության ֆակուլտետում, ինչպես և համալսարանի մյուս ֆակուլտետներում մշակվել են միայն 2011/2012թթ ուսումնական տարում, իսկ ծրագրերի մշտադիտարկման և

պարբերական վերանայման գործընթացները մեկնարկել են 2012/2013թթ ուսումնական տարում, հետևաբար այս նոր գործընթացների արդյունավետության վերաբերյալ դեռևս չկան համապատասխան տվյալներ:

ՁԵՆՍԱՐՔԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Թե բակալավրի, և թե մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի ծրագրերը կազմվում են գիտակրթական հենքի վրա և ուսանողներին հնարավորություն են ընձեռում ընդգրկվելու ֆակուլտետի գիտահետազոտական լաբորատորիաների գիտական աշխատանքների մեջ:
2. *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերի վերանայման արդյունքում ստեղծվել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված ծրագրեր:
3. Ստեղծվել է տրամաբանական կապ *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերի նպատակների (պրոֆիլի) և ակնկալվող կոմպետենցիաների կրթական վերջնարդյունքների և կարիերայի հնարավորությունների միջև:
4. *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերով շնորհիվ որակավորումները համապատասխանեցված են դուրլինյան նկարագրիչների և Հարատև ուսումնառության որակավորումների եվրոպական շրջանակի պահանջներին:

ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

1. Որակավորումների ազգային շրջանակը և բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները բավարար հիմքեր չեն տրամադրում կենսաբանության ոլորտում բակալավրի և մագիստրատուրայի տրամաբանորեն կառուցված և փոխկապակցված կրթական ծրագրերի մշակման համար:
2. Ե՛վ բակալավրի և՛ մագիստրոսի ուսումնական ծրագրերը զգալի կերպով մանրատված են, առկա են շատ փոքրածավալ դասընթացներ (ուսումնական մոդուլներ), որոնք միմյանց հետ տրամաբանորեն շաղկապված չեն:
3. Չնայած ԵՊՀ-ում դեռևս 2011թ-ին ընդունվել են կրթական ծրագրերի հաստատման, ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգերը, այնուամենայնիվ դրանք դեռևս կիրառության մեջ չեն մտել *կենսաբանության* բակալավրի և *գենետիկայի* մագիստրոսի կրթական ծրագրերի մակարդակներում:

ՉԱՓԱՆԻՇ 2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Մասնագիտության կրթական ծրագիրն ապահովված է անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.1.

ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ և դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր

Ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար առկա է կենսաբան մասնագետների պատշաճ որակավորում ունեցող դասախոսական կազմ, որոնց մեծ մասը (96 %-ը) գիտական աստիճաններ ունեցող բարձրորակ մասնագետներ են (գիտությունների 25 դոկտորներ՝ 27 % և 65 թեկնածուներ՝ 70%), այդ թվում 24 դասախոս ունի պրոֆեսորի և 35 դասախոս՝ դոցենտի գիտական կոչումներ: Համալսարանում գործում է դասախոսական կազմի հավաքագրման հստակ քաղաքականություն, որի հիմքում ընկած են ԵՊՀ Կանոնադրությամբ վերապահվող գործառնություններին համապատասխան մրցութային ընթացակարգերը: Համաձայն վերջինների, բակալավրիատի “Կենսաբանություն” մասնագիտությամբ մասնագետներ պատրաստող ֆակուլտետի վեց ամբիոնների (“Բուսաբանության”, “Կենդանաբանության” “Գենետիկայի և բջջաբանության”, “Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի”, Մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի”, “Էկոլոգիայի և բնության պահպանության” ամբիոններ), ինչպես նաև “Գենետիկա” մագիստրոսական ծրագրի (“Գենետիկա և բջջաբանություն” ամբիոն) դասախոսական անձնակազմի հաստիքների վրա պարբերաբար (5 տարին մեկ) հայտարարվում է մրցույթ պրոֆեսորի կամ դոցենտի թափուր պաշտոնների զբաղեցման համար: Մրցույթն իրականացվում է համաձայն “Հայաստանի Հանրապետության գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի”, որը հաստատված է ՀՀ Կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 645 որոշմամբ: Պրոֆեսորի թափուր տեղին կարող են հավակնել կենսաբանության բնագավառի դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում ունեցող ինչպես ԵՊՀ-ի, այնպես էլ այլ կազմակերպությունների աշխատող կամ անհատ մասնագետներ, իսկ դոցենտի պաշտոնին՝ թեկնածուի գիտական աստիճան և դոցենտի կոչում ունեցողները՝ համաձայն նշված որոշման մեջ առկա հստակ պահանջների: Այնուհետև, ֆակուլտետի գիտական խորհուրդը, փակ գաղտնի քվեարկությամբ, ընտրում է հավակնորդին և ներկայացնում ԵՊՀ գիտական խորհուրդ հաստատման համար:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետն իր, որպես առանձին ֆակուլտետ, գոյության 80 տարիների ընթացքում միշտ եղել է նաև կարևոր գիտահետազոտական կենտրոն, որտեղ ամբիոններին կից գործել են նաև գիտահետազոտական լաբորատորիաներ և խմբեր: Ներկայումս ֆակուլտետում գործող ութ ամբիոններից բացի կան նաև հինգ գիտահետազոտական լաբորատորիաներ, որտեղ համատեղությամբ աշխատում են դասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև հիմնական

գիտաշխատողներ: “Կենսաբանություն” մասնագիտությունը սպասարկող վեց ամբիոնների դասախոսական անձնակազմի մի մասն ընդգրկված է “Ընդհանուր կենսաբանության” գիտահետազոտական լաբորատորիայում: Այդ մեծ լաբորատորիայի 37 հաստիքների մոտ կեսը երիտասարդ գիտաշխատողներ են, որոնք էլ հանդիսանում են այն ռեզերվը, որ պարբերաբար լրացնում է մասնագիտությունը սպասարկող վեց ամբիոնների դասախոսական կազմը, սկզբնական փուլերում՝ համատեղությամբ (քառորդ կամ կես դրույքներով), այնուհետև, անհրաժեշտ փորձառություն ձեռք բերելուց հետո՝ որպես հիմնական դասախոսներ, մրցութային ընթացակարգով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.2.

ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել է դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վերհանմանը և զարգացմանը

Կենսաբանություն կրթական ծրագրի հաջող իրականացման համար պարբերաբար գործառույթներ են կիրառվում դասախոսական կազմի գիտակրթական պատշաճ մակարդակի պահպանման և զարգացման, գիտության ժամանակակից նվաճումներով հագեցած դասախոսությունների կազմակերպման, լաբորատոր աշխատանքների որակի բարձրացման ուղղությամբ: Դրան նպաստում են ֆակուլտետի գիտական խորհրդում դասախոսների պարբերաբար իրականացվող գիտական զեկուցումները, ֆակուլտետի առաջատար դասախոսների և գիտաշխատողների արտասահմանյան գիտական և գիտակրթական գործուղումները և գիտական խորհրդում դրանց հաշվետու զեկույցները, Միջազգային գիտական և գիտակրթական գիտաժողովներին դասախոսական կազմի ներկայացուցիչների պարբերաբար մասնակցությունը, ամբիոններում իրականացվող ամենամսյա գիտական սեմինարները, արտասահմանից հրավիրված առաջնակարգ գիտնականների դասախոսություններն ու զեկուցումները, ուսումնական լաբորատորիաների նյութատեխնիկական բազայի պարբերաբար բարեփոխումները (նոր սարքավորումների ձեռքբերում, սարքավորումների վերանորոգում) և այլ միջոցառումներ:

Դասախոսական անձնակազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն է իրագործում համալսարանի Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության դասախոսների որակավորման բարձրացման բաժինը:

Առաջնորդվելով ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի I գ խնդրի 7-րդ կետի՝ *“Ընդլայնել կրեդիտային համակարգի կիրառության տիրույթը՝ ընդգրկելով հեռակա ուսուցումը, ասպիրանտուրան և հետբուհական լրացուցիչ կրթության համակարգը”* և IV ա խնդրի՝ *“Համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան”* դրույթներով՝ ԵՊՀ Գիտական խորհրդի 2010թ. նոյեմբերի 18-ի թիվ 7 նիստում որոշում ընդունվեց 2011/12 ուսումնական տարվանից դասախոսների որակավորման բարձրացման ծրագիրը կազմակերպել կրեդիտային համակարգով:

2011 թ-ի սեպտեմբերից Երևանի պետական համալսարանում մեկնարկել է կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման հնգամյա կրթագիտական

ծրագիրը:

Ծրագրի իրականացումը և ֆինանսավորումը ստանձնել է ԵՊՀ-ն, իսկ կազմակերպման պատասխանատուն Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությունը: Ծրագիրն իրականացվում է ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատված կանոնակարգով:

Որակավորման բարձրացման ծրագրի ընդհանուր բեռնվածությունը 30 կրեդիտ է, որը յուրաքանչյուր դասախոս հավաքելու է անհատական ծրագրով՝ կազմված իր իսկ կողմից, հենքային ծրագրի հիման վրա: Ծրագիրն ունի 2 կառուցամաս՝ գիտական և կրթական:

Գիտական կառուցամասը (բեռնվածությունը՝ 3-20 կրեդիտ) հետազոտական ակտիվությամբ տնօրինում են ծրագրի մասնակիցները: Կրթական կառուցամասի գծով (բեռնվածությունը՝ 10-27 կրեդիտ) պարբերաբար կազմակերպվում են դասընթացներ:

Մասնագիտական պատրաստության կրթամասի առավելագույն բեռնվածությունը 6 կրեդիտ է (որից 2 կրեդիտը կազմում է պարտադիր դասընթացը): Կրթամասը ներառում է 3 մոդուլ (որից 1-ը՝ պարտադիր)՝ յուրաքանչյուրը 2-ական կրեդիտ աշխատածավալով: Դասընթացները նպատակաուղղված են դասախոսի մասնագիտական գիտելիքների արդիականացմանը:

ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ Մասնագիտական պատրաստության կրթամասի համար պարտադիր մոդուլ է սահմանվել “Մասնագիտության արդի հիմնախնդիրներ” առարկան՝ 20 ժամ բեռնվածությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենսաբանության ֆակուլտետում գործում է 8 ամբիոն, այդ ժամերը բաշխվել են գործող ամբիոնների միջև:

Մասնագիտական պատրաստության կրթամասի կամընտրական մոդուլներ են ընտրվել “Կենսաբանության արդի մոլեկուլային և բջջային ասպեկտները” և “ Կենսաբազմաբանության և դրա պահպանության խնդիրները” առարկաները:

2011-2016թթ ուս. տարիների ընթացքում դասախոսների որակավորման բարձրացման ծրագրին մասնակցելու համար հայտագրվել են “Կենսաբանություն” բաժանմունքի 20 դասախոս: 2011-2012 ուս. տարվա ընթացքում նրանց կողմից հավաքած կրեդիտների ընդհանուր քանակը կազմել է մոտ 150 /առնվազն 600՝ 5-ը տարիների ընթացքում/:

Ակնկալվում է, որ 2011-2016 թթ. կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման ծրագրին հայտագրված դասախոսները զգալիորեն կբարձրացնեն իրենց գիտելիքները համակարգչային գրագիտության, անգլերեն լեզվի, մանկավարժական-հոգեբանական և մասնագիտական պատրաստվածության բնագավառներում: Սակայն, դասախոսների որակավորման բարձրացման դասընթացները բավարար արդյունավետ չեն, հատկապես՝ մեթոդական բաղադրիչը: Կարծում ենք, որ արդյունավետության բարձրացմանը կնպաստի դասախոսի գիտակրթական գործունեության կազմակերպումը հանրապետության մեկ այլ բուհում, կամ արտասահմանյան համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում, որտեղ հնարավոր է ապահովել դասախոսի նեղ մասնագիտական որակավորման բարձրացումը:

Դասախոսական կազմի գործունեության որակի բարձրացմանը նպաստում են նաև ամբիոնների վարիչների և փորձաշատ դասախոսների կողմից իրականացվող դասալսումները, որոնք հատկապես կարևոր են երիտասարդ դասախոսների, համատեղությամբ աշխատող նվազ փորձառություն ունեցող մասնագետների համար:

Դասախոսների մասնագիտական առաջընթացին անշուշտ նպաստում են նաև ուսանողների սոցիոլոգիական անանուն հարցումները, որոնք կիրառվում են ԵՊՀ-ում մոտ 10 տարի և որտեղ ուսանողները անկաշկանդ գնահատում և քննադատում են դասախոսների գործունեությունը: Այդ հարցումների արդյունքները քննարկվում են ֆակուլտետի դեկանի և առանձին ամբիոնների վարիչների կողմից: Այս կամ այն դասախոսի վերաբերյալ ուսանողների մեծ մասի կողմից կրկնվող քննադատությունների, դասախոսներին տրվող ցածր գնահատականների, դասախոսությունների չափից ավելի բարդության կամ պարզունակության, դասախոսի ոչ վայելուչ պահվածքի և այլ թերացումների դեպքում դեկանը կամ ամբիոնի վարիչը զրուցում են տվյալ դասախոսի հետ, ինչը նպաստում է թերացումների վերացմանը, ընդհանուր առմամբ դասավանդման որակի բարձրացմանը: Որոշ դեպքերում կենսաբանության տարբեր դասընթացների դասախոսությունների կամ լաբորատոր պարապմունքների վերաբերյալ ուսանողների առաջարկությունները կարող են հիմք հանդիսանալ դասընթացի ծրագրային փոփոխությունների համար, որոշ բաժինների վերաբերյալ դասախոսությունների կամ լաբորատոր աշխատանքների ժամաքանակի մեծացման կամ փոքրացման առումով: Ընդհանրապես, ուսանողների սոցիոլոգիական հարցումների հարցաշարն ընդգրկում է դասախոսի գործունեության տարբեր ասպեկտները, որոնց ծանոթանալով, դասախոսը հնարավորություն է ստանում դիտարկել իր դասախոսությունը ուսանողի աչքերով, վեր հանել դասախոսության մինչ այդ իր չնկատած թերացումները, ինչը, անկասկած, նպաստում է դասախոսությունների բարելավմանը, ընդհանուր առմամբ, դասախոսի գործունեության որակի բարձրացմանը:

Այսպիսով, վերը նշված բոլոր միջոցառումները, որոնք նախանշում են դասախոսական անձնակազմի գնահատման քաղաքականությունը, եզրափակվում են պարբերաբար, հինգ տարին մեկ, իրականացվող մրցութային ընթացակարգով: Այն ի մի է բերում դասախոսի ընդհանուր գործունեությունը, հաշվի է առնում այդ գործունեության դրականն ու բացասականը: Այս բոլորն, իհարկե, նպաստում են դասախոսի գործունեության որակի ապահովմանը և զարգացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.3.

ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին

Բակալավրիատի և մագիստրատուրայի նշված կրթական ծրագրերի իրականացմանը մասնակցում են ֆակուլտետի վեց ամբիոնների 53 դասախոսներ և ուսումնաօժանդակ անձնակազմի 23 ներկայացուցիչներ: Հիմնական դասախոսական անձնակազմը ներառում է ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս, 2 թղթակից անդամներ, սպասարկող վեց ամբիոնների գիտությունների 14 դոկտորներ, 13 պրոֆեսորներ, 26 գիտությունների թեկնածուներ՝ այդ թվում՝ 15 դոցենտներ և 11 ասիստենտներ, որոնց մեծ մասը հանրապետությունում, իսկ մի

մասն էլ՝ նաև արտասահմանում, հայտնի գիտնական-մանկավարժներ են: Ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի կրթական ծրագրերի դասընթացների (հատկապես՝ դասախոսությունների) առյուծի բաժինն ընկնում է հիմնական դասախոսական կազմի վրա: Եվ բնական է, որ նման տիտղոսակիր պրոֆեսորադասախոսական կազմի առկայությունը, անշուշտ, ապահովում է բակալավրիատի ընդհանուր կենսաբանության կրթական ծրագրի և մագիստրատուրայի կիրառական կենսաբանության ծրագրի կայուն և անխափան իրականացումը:

Կրթական ծրագրերի կայուն իրականացման համար ֆակուլտետում, նշված վեց ամբիոններում, առկա է նաև համապատասխան նյութատեխնիկական բազա՝ տարաբնույթ սարքավորումներ, ռեակտիվներ, որոնք, բնականաբար, գտնվում են հիմնական դասախոսական կազմի տնօրինության տակ և օգտագործվում են լաբորատոր դասընթացներում, ինչպես նաև բակալավրիատի կուրսային և ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ժամանակ: Բակալավրիատի կենսաբանության կրթական ծրագրի կայուն իրականացմանը նպաստում են նաև առաջին և երկրորդ կուրսերում անցկացվող դաշտային պրակտիկաները համալսարանի Հանքավանում գտնվող ուսումնական հանգրվանում, ինչպես նաև երրորդ կուրսում, ֆակուլտետում ընթացող ուսումնական պրակտիկան:

Ինչպես ֆակուլտետում պետական բազային ֆինանսավորմամբ գործող հինգ գիտահետազոտական լաբորատորիաներում, այնպես էլ պետական և արտասահմանյան դրամաշնորհներով ֆինանսավորվող գիտական թեմաներում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ընդգրկումը մեծապես նպաստում է նրանց կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի գիտահետազոտական մակարդակի բարձրացմանը, ինչը կարևոր է բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների գիտակրթական պատշաճ որակի ապահովման առումով:

Մասնագիտության կրթական ծրագրերի կայուն իրականացմանը նպաստում է նաև հիմնական դասախոսների պատշաճ գիտական էրուդիցիան, որը հնարավորություն է տալիս որևէ դասընթացն իրականացնող դասախոսի բացակայության դեպքում (գործուղում կամ այլ պատճառներ) ժամանակավորապես փոխարինել նրան տվյալ ամբիոնի մեկ այլ դասախոսով: Ինչպես կարճաժամկետ (մինչև 10 օր), այնպես էլ երկարաժամկետ (10 օրից ավելի) գոծուղումները ձևակերպվում են միայն այն դեպքում, երբ ամբիոնի վարիչի և դեկանի կողմից գրավոր հավաստիացվում է, թե ով և երբ պետք է փոխարինի բացակայող դասախոսին:

Վերը նշվածը վկայում է այն, որ հիմնական դասախոսական կազմը, ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում, ապահովում է համապատասխան կրթական ծրագրերի կայուն իրականացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.4.

Հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը

Կենսաբանություն մասնագիտության գործող կրթական ծրագիրն իր մեջ ներառում է դասընթացներ (“Հոգեբանություն”, “Մանկավարժություն”), որոնք նպաստում են բակալավրիատի ուսանողների մոտ մանկավարժական ձիրքի ձևավորմանը, ունկնդիրների բարոյահոգեբանական առանձնահատկություններին համապատասխանող ուսուցողական մոտեցումների կիրառմանը: Ընդհանուր կենսաբանության տարբեր բաժինների դասավանդման առանձնահատկություններին և հմտություններին բակալավրիատի ուսանողները ծանոթանում են մեկ այլ դասընթացի՝ “Դասավանդման մեթոդիկայի” ընթացքում, իսկ մանկավարժին բնորոշ նրանց մանկավարժական և բարոյահոգեբանական հատկանիշներն դրսևորվում և զարգացում են ապրում արդեն գործնականում, բակալավրիատի ավարտական կուրսում, Երևանի հանրակրթական դպրոցներում մեկ ամիս տևող մանկավարժական պրակտիկայի ընթացքում:

Դասավանդման հմտությունները կատարելագործվում են արդեն մագիստրատուրայում՝ գիտամանկավարժական պրակտիկայի ընթացքում, որը կազմակերպվում է մագիստրատուրայի վերջին՝ 4-րդ կիսամյակում, մագիստրանտի գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Համաձայն այդ ծրագրի մագիստրանտը բակալավրիատի ուսանողների համար անցկացնում է սեմինարներ, գործնական պարապմունքներ, գրախոսում կուրսային աշխատանքներ:

Այսպիսով, բակալավրիատի մասնագիտության կրթական ծրագրում իրականացվող վերոհիշյալ դասընթացներն ու մանկավարժական պրակտիկան, ինչպես նաև մագիստրատուրայում անցկացվող գիտամանկավարժական պրակտիկան, անշուշտ, պայմանավորում են շրջանավարտների մանկավարժական հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Շրջանավարտներն ի գործու են լինում կենսաբանության բնագավառում դասավանդելու ինչպես հանրակրթության, այնպես էլ բարձրագույն կրթության համակարգում: Վերջինս ապահովում է ֆակուլտետի դասախոսական կազմի համալրումը երիտասարդ, խոստումնալից մասնագետներով: Հետևաբար, բակալավրիատում և մագիստրատուրայում գործող կենսաբանության կրթական ծրագիրը նպաստում է դասախոսական կազմի կայացմանը:

Մասնագիտության կրթական ծրագրերի դասընթացներում պարբերաբար իրականացվող փոփոխությունները, որոնք առաջարկվում են ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի կողմից և հաստատվում ֆակուլտետի գիտական խորհրդում, միտված են դասընթացներում ներգրավելու արագ զարգացող կենսաբանական գիտության տարբեր բնագավառներում արձանագրվող կարևորագույն հայտնագործություններն ու նորությունները: Սա նույնպես նպաստում է բարձրորակ դասախոսական կազմի կայացմանը, դասախոսների մասնագիտական առաջընթացին:

Շնորհիվ այն բանի, որ վերջին տարիներին ֆակուլտետի մի շարք ամբիոնների մասնագետներ մասնակցել են միջազգային կրթական դրամաշնորհներով ֆինանսավորվող ծրագրերի կատարմանը (TEMPUS-ի երեք ծրագիր) ֆակուլտետը ստացել է հավելյալ միջոցներ համակարգչային պարկը ընդլայնելու, ֆակուլտետում համակարգչային կաբինետ

ստեղծելու, դասախոսությունների մի մասը (հատկապես մագիստրատուրայում) տեխնիկական արդի միջոցներով իրականացնելու համար:

ՉԵՈՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

1. Շնորհիվ ռեկտորատի վարած քաղաքականության զգալիորեն ակտիվացել է մայրենի լեզվով ուսումնական, հատկապես ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը, որը զգալիորեն նպաստում է սովորողների գիտելիքների հարստացմանը և դասավանդման որակի բարձրացմանը:
2. Շնորհիվ այն բանի, որ վերջին տարիներին ֆակուլտետի մի շարք ամբիոնների մասնագետներ մասնակցել են միջազգային կրթական դրամաշնորհներով ֆինանսավորվող ծրագրերի կատարմանը (TEMPUS-ի երեք ծրագիր) ֆակուլտետը ստացել է հավելյալ միջոցներ համակարգչային պարկը ընդլայնելու, ֆակուլտետում համակարգչային կաբինետ ստեղծելու, դասախոսությունների մի մասը (հատկապես մագիստրատուրայում) տեխնիկական արդի միջոցներով իրականացնելու համար:
3. Ինչպես ֆակուլտետում պետական բազային ֆինանսավորմամբ գործող հինգ գիտահետազոտական լաբորատորիաներում, այնպես էլ պետական և արտասահմանյան դրամաշնորհներով ֆինանսավորվող գիտական թեմաներում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ընդգրկումը մեծապես նպաստում է նրանց կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի գիտահետազոտական մակարդակի բարձրացմանը, ինչը կարևոր է բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների գիտակրթական պատշաճ որակի ապահովման առումով:

ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

1. Ամբիոններում դասախոսների դասալսումները գործընկեր-դասախոսների կողմից հազվադեպ են իրականացվում, այն էլ, հիմնականում, ուսանողների կողմից որոշակի պահանջների կամ բողոքների առկայության դեպքում: Դրանք չունեն կանոնավոր պարբերական բնույթ, իսկ կատարված դասալսումների արդյունքներն էլ քննարկվում ամբիոնների նիստերում միայն բանավոր, փաստաթղթային ձևակերպումները բացակայում են:
2. Դասախոսների որակավորման բարձրացման դասընթացները բավարար արդյունավետ չեն, հատկապես՝ մեթոդական բաղադրիչը: Կարծում ենք, որ արդյունավետության բարձրացմանը կնպաստի դասախոսի գիտակրթական գործունեության կազմակերպումը հանրապետության մեկ այլ բուհում, կամ արտասահմանյան համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում, որտեղ հնարավոր է ապահովել դասախոսի նեղ մասնագիտական որակավորման բարձրացումը:

3. ԵՊՀ ռեկտորատի կողմից յուրաքանչյուր կիսամյակ, անցկացվող դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքները քննարկվում են միայն այս կամ այն դասախոսի գործունեության վերաբերյալ ուսանողների մի մասի 3-4 կիսամյակ կրկնվող ցածր միջինացված գնահատականի կամ, ուսանողների համոզմամբ, դասախոսի կողմից թույլ տված արտակարգ բացասական որևէ երևույթի դեպքում: Մինչդեռ կարծում ենք, որ դասախոսների դասավանդման որակի բարձրացման համար նպատակահարմար է բոլոր դասախոսներին (անկախ միջինացված գնահատականի մեծությունից) ծանոթացնել ուսանողների կողմից տրված բոլոր գնահատականներին՝ ըստ հարցաշարի յուրաքանչյուր կետի: Սա կօգնի դասախոսին ճիշտ գնահատելու իր դասախոսական գործունեության տարբեր ասպեկտները, տեսնելու ինքն իրեն ուսանողի աչքերով, ինչն էլ, անկասկած, կնպաստի դասավանդման որակի և արդյունավետության բարձրացմանը:

ՉԱՓԱՆԻՇ 3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՄԿԾ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.1.

ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար:

ԵՊՀ-ում իրականացվում են դասավանդման և ուսումնառության ռազմավարության և մարտավարության արմատական փոփոխություններ, որոնք ներառվել են նաև *Գենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի ՄԿԾ-ներում:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Գենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի ծրագրերում կիրառվող մեթոդներն են տարբեր ոճի դասախոսությունները (պասիվ և ակտիվ), սեմինարները, գործնական և լաբորատոր աշխատանքները, ուսումնական, մանկավարժական և արտադրական պրակտիկաները, բանավեճերը, կոլեկտիվ մտածողական գործունեությունը (Հավելված 1 և 2): Քննարկենք դրանք:

1. Դասական դասախոսություն (պասիվ մեթոդ): Դասական դասախոսությունը դասախոսի և ուսանողների փոխհամագործակցության այնպիսի ձև է, երբ դասախոսը դասի ընթացքը ղեկավարող հիմնական գործող անձն է, իսկ ուսանողները հանդես են գալիս որպես դասախոսի հրահանգներին ենթարկվող պասիվ լսողներ:

Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և ուսանողների կողմից նյութի յուրացման տեսակետից այս մեթոդի արդյունավետությունը համեմատաբար ցածր է, հիմնվելով ուսանողների կարծիքի վրա: Դրականն այն է, որ դասախոսը հնարավորություն ունի դասին ավելի հեշտ նախապատրաստվելու և կարճ ժամանակահատվածում նյութի ավելի մեծ ծավալ մատուցելու: Դասախոսության այս տեսակը փորձառու դասախոսի ձեռքերում բավականին արդյունավետ է, հատկապես, եթե ուսանողներն ունեն հստակ նպատակներ և կողմնորոշված են առարկան ավելի խորությամբ ուսումնասիրելու:

Դասի սկզբում դասախոսը հայտնում է դասախոսության (պարապմունքի) թեման և շարադրում նյութը, հնարավորություն տալով ուսանողներին ամբողջությամբ այն գրի առնելու (սեղմ շարադրելու): Սեմինար-պարապմունքների ընթացքում դասախոսն ստուգում է նյութի յուրացումը, գնահատում ուսանողների ձեռքբերված գիտելիքները: Գործնական և լաբորատոր պարապմունքների ընթացքում ուսանողները, հաշվի առնելով դասախոսի ցուցումները և անհրաժեշտության դեպքում դիմելով ուսումնաօժանդակ անձնակազմի (լաբորանտի) օգնությանն, ինքնուրույն կատարում են նյութին վերաբերող լաբորատոր աշխատանքը, ինչը նպաստում է նյութի լիակատար յուրացմանը:

Հաշվի առնելով ներկայումս լույս տեսնող հայերեն լեզվով դասագրքերը և

ուսումնասիրողական ձեռնարկները և նրանցում կիրառվող բազմաթիվ նոր տերմինների առկայությունը, դասախոսության այս ձևը ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում ուսումնասիրության գործընթացում դեռևս բավականին մեծ տեղ է գրավում:

Դասախոսությունների այս տարատեսակը կիրառվում է կենսաբանության ֆակուլտետում դասավանդվող մեծաթիվ առարկաների ընթացքում:

2. Հիմնախնդրային դասախոսություն (ակտիվ մեթոդ): Հիմնախնդրային դասախոսությունը ենթադրում է դասախոսի և ուսանողների փոխհամագործակցություն, այսինքն ուսանողները հանդես են գալիս ոչ թե որպես պասիվ լսողներ, այլ որպես դասի ակտիվ մասնակիցներ:

Այն նախատեսում է ոչ միանշանակ լուծում ունեցող հիմնախնդրային առաջադրանքները լուծելու ունակությունների ձևավորում: Վերջինս ենթադրում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի ծավալի մեծացում և ձեռքբերված ունակությունները գործնականում կիրառելու հմտությունների մշակում:

Հիմնախնդրային դասախոսության կիրառմամբ ապահովվում է երեք հիմնական նպատակներին հասնելը: Դրանք հետևյալներն են. 1. տեսական գիտելիքների յուրացում. 2. տեսական մտածողության զարգացում. 3. ուսուցանվող առարկայի և ապագա մասնագիտության նկատմամբ իմացական հետաքրքրության ձևավորում:

Այս տարատեսակի դասախոսություններն ապահովում են գիտության սկզբունքների և օրինաչափությունների ապագա մասնագետների կողմից ստեղծագործական յուրացումը, ակտիվացնում են ուսանողների ուսումնասիրական գործունեությունը, նրանց ինքնուրույն աշխատանքը, գիտելիքների յուրացումը և դրանք գործնականում կիրառելու ունակությունները:

Հիմնախնդրային դասախոսությունն սկսվում է նյութի շարադրման ընթացքում լուծման անհրաժեշտություն ունեցող հիմնախնդիր առաջադրելուց: Հիմնախնդրային հարցերը տարբերվում են ոչ հիմնախնդրայիններից նրանով, որ նրանցում թաքնված հիմնախնդրի լուծումը միանշանակ չէ, այսինքն՝ նրա լուծման վերաբերյալ նախնական փորձը բացակայում է: Հիմնախնդրային հարցին պատասխանելու համար ուսանողը պետք է մտորի, իսկ ոչ հիմնախնդրային հարցին պատասխանելու համար՝ իմանա այդ խնդիրը լուծելու հայտնի կանոնները և ճանապարհները: Այսպես, օրինակ՝ ֆիզիոլոգիա առարկայից առաջադրվում է նոր նյութ «Արյան ֆիզիկաքիմիական հատկությունները»: Ուսանողների առջև դրվող խնդիրն է՝ առաջարկել վարկածներ, թե հատկապես ո՞ր հատկությունները կարող են կարևորվել օրգանիզմի հոմեոստազը պահպանելու գործում և բացատրել իրենց կողմից առաջ քաշված վարկածը, ելնելով նախորդ տարիներին այլ առարկաներից ձեռքբերված գիտելիքները: Դասախոսը՝ ուսանողների հետ քննարկելով յուրաքանչյուր վարկած՝ տալիս է ճիշտ գնահատականը:

Դասախոսությունների այս տարատեսակը կիրառվում է ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթամասերի տարբեր առարկաների դասավանդման ընթացքում, այդ թվում.

- բակալավրի մակարդակի 2-րդ կուրսում՝ «Էկոլոգիա և ռաջիոնալ բնօգտագործում»»

- բակալավրի մակարդակի 3-րդ կուրսում՝ “Դասավանդման մեթոդիկա”, “Մանրէաբանություն և վիրուսաբանություն”, “Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա”, “Գենետիկա”, “Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ”, “Հողերի էկոլոգիա”, “Օնկոգենետիկա»
- բակալավրի մակարդակի 4-րդ կուրսում՝ “Մասնագիտության արդիական խնդիրները”, “Կենսատեխնոլոգիայի ներածություն”, “Մարդու գենետիկայի հիմունքներ”, “Կենսաբանական անվտանգություն և կենսաբազմազանության պահպանություն”, “Էկոթունաբանություն»

3. Դասախոսություն-տեսանելիացում (վիզուալիզացիա) (ակտիվ մեթոդ):

Դասախոսությունների այս տարատեսակը պատկերավորության սկզբունքի կիրառման նոր եղանակի արդյունք է: Դասախոսություն-տեսանելիացումը սովորեցնում է ուսանողներին փոխարկելու բանավոր և գրավոր տեղեկատվությունը տեսանելի ձևի, ինչը նպաստում է նրանցում մասնագիտական մտածելակերպի ձևավորմանը՝ շնորհիվ ուսուցման բովանդակության առավել նշանակալի էական տարրերի ընդգծման:

Դասախոսություն-տեսանելիացումը նպաստում է հիմնախնդրային իրավիճակի ստեղծմանը, որի լուծումն իրականացվում է տեղեկատվության վերլուծման, սինթեզման, ընդհանրացման, ծավալման կամ սեղմման միջոցով, այսինքն՝ ակտիվ մտածողական գործունեության ներառմամբ:


Նման դասախոսության նախապատրաստումը ենթադրում է ուսումնական տեղեկատվության վերակառուցում: Այն ներկայացվում է ուսանողներին ուսուցման տեխնիկական միջոցների կիրառմամբ (դասի նյութին վերաբերող ուսումնական ֆիլմեր, համակարգչային տարբեր ծրագրեր և այլն): Այս աշխատանքում կարող են ներգրավվել նաև ուսանողները, ինչը նպաստում է նրանց մեջ համապատասխան հմտությունների, ակտիվության բարձր մակարդակի ձևավորմանը, ինչպես նաև ուսուցման գործընթացի նկատմամբ նրանց անձնային վերաբերմունքի դաստիարակմանը: Նախապատրաստելով դասախոսությունը, դասախոսը ներկայացնում է նյութը դրույթների տեսքով, բացատրում դրանցից յուրաքանչյուրը: Դասախոսության մեջ նա ներառում է տարբեր գծապատկերներ և անիմացիաներ, կարճ վիդեոնյութեր, որոնք նպաստում են նյութի առավել լավ յուրացմանը: Քանի որ կենսաբանության ֆակուլտետում նման դիդակտիկ նյութի պակաս է զգացվում, այս տարատեսակը կիրառվում է դեռևս ոչ բոլոր թեմաների դասավանդման ընթացքում:

Դասավանդման մեթոդների այս տարատեսակն առավել հաճախ կիրառվում է ինչպես ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթամասերի դասավանդվող տարբեր առարկաների դասախոսությունների, այնպես էլ լաբորատոր և գործնական պարապմունքների ընթացքում, այդ թվում.

- բակալավրի մակարդակի 2-րդ կուրսում՝ “Ողնաշարավորների կենդանաբանություն”
- բակալավրի մակարդակի 3-րդ կուրսում՝ “Մանրէաբանություն և վիրուսաբանություն”, “Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա”, “Գենետիկա”:
- բակալավրի մակարդակի 4-րդ կուրսում՝ “Կենսատեխնոլոգիայի ներածություն”, ”Մարդուգենետիկայի հիմունքներ”:

- *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի ՄԿԾ-ում դասավանդման և ուսուցման մեթոդների այս տարատեսակը հիմնականն է:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում ուսուցման որակի բարձրացման նպատակով դասավանդման և ուսուցման մեթոդների իրականացված բարեփոխումներն արտացոլված են Կենսաբանություն մասնագիտության բակալավրի և Գենետիկա մասնագիտության մագիստրոսի ՄԿԾ-ներում կիրառվող դասախոսությունների տարատեսակների փոփոխման զճապատկերում, որն արտահայտում է վերջին տարիների վերլուծությունը (Նկ.3.1.):



Նկ. 3.1. Դասախոսությունների կատարելագործումն ըստ տարիների
a (2010), b (2011), c (2012)

- դասական դասախոսություն
- հիմնախնդրային դասախոսություն
- դասախոսություն-տեսանելիացում

Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում դասախոսությունների դեռևս բավարար չափով չմշակված և միայն եզակի դեպքերում կիրառվող ևս մեկ տարատեսակը՝ դասախոսություն՝ նախօրոք նախատեսված սխալներով, որը կարիք ունի համալրման և շտկման: Դասախոսությունների այս տարատեսակի նպատակն է զարգացնել մասնագիտական իրավիճակները վերլուծելու, փորձագետի կամ ընդդիմախոսի դերում հանդես գալու, սխալ տեղեկատվությունը հայտնաբերելու ուսանողների ունակությունը:

Դասախոսությանը նախապատրաստվելիս դասախոսն իրնյութում տեղադրում է բովանդակային կամ մեթոդական որոշակի սխալներ, ընդ որում պետք է ընտրվեն առավել հաճախ նկատվող սխալները: Դա դասախոսից պահանջում է նյութի իմացության բարձր մակարդակ և հրետորական հմտություններ: Սխալների ցանկին ուսանողները ծանոթանում են միայն դասախոսության ավարտին, հնարավորություն ստանալով հայտնաբերելու սխալները և պարզաբանելու դրանք շտկելու իրենց ունակությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.2.

ՄԿԾ-ն իրականացվում է հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակներում ՄԿԾ-ներն իրականացվում են հաշվի առնելով ինչպես ֆակուլտետի տարիների փորձը և ավանդույթները, այնպես էլ համալսարանական մակարդակում և տարբեր ուսումնական հաստատություններում կիրառվող դասավանդման առաջավոր միջազգային փորձը և մոտեցումները:

Դրանց նպաստում են.

- ֆակուլտետում բարձրագույն կրթության զարգացման TEMPUS Եվրոպական ծրագրով մագիստրոսի նոր ՄԿԾ-ների մշակումը և իրականացումը,
- ֆակուլտետի դասախոսների բազմաթիվ այցելություններն արտասահմանյան համալսարաններ,
- ֆակուլտետի դասախոսների արդյունավետ մասնակցությունը միջազգային մեթոդական գիտաժողովներին (2009 թ. պրոֆ. Ա. Թոշունյանն արժանացել է ԱՄՆ մանրէաբանական ընկերության և UNESCO-ի միջազգային դասախոսական առաջնորդող դրամաշնորհի),
- ֆակուլտետի դասախոսների և երիտասարդ գիտնականների ակտիվ մասնակցությունը միջազգային գիտական կոնգրեսներին և սիմպոզիումներին (2002-2012 թթ.՝ ԱՄՆ, Գերմանիա, Շվեյցարիա, Իսպանիա, Հոլանդիա, Պորտուգալիա, Հունաստան, Իտալիա, Լեհաստան, Հունգարիա, Ռուսաստան և այլուր):

Նշված փորձառությունը և նոր մոտեցումների առաջարկությունները պարբերաբար քննարկվում են ֆակուլտետի ամբիոններում և գիտական խորհրդում: Նրանք բարձրացնում են դասավանդման և ուսուցման արդյունավետությունը, նպաստում ՄԿԾ-ների վերամշակման ընթացքում միջազգային փորձի վերլուծմանը և ներդրմանը:

Միաժամանակ պետք է նշել, որ ֆինանսական միջոցների սղության պատճառով այս գործունեությունը սահմանափակ է և չի տարածվում պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմի վրա: Բացի այդ փոքր է առաջատար համալսարաններից դասախոսների հրավիրման և փոխանակման հնարավորությունը:

ՄԿԾ-ների մշակման ընթացքում, ինչպես նշվել է մասնագրերում (Հավելվածներ 1 և 2), արդեն իսկ հաշվի է առնվել առաջատար տարբեր համալսարանների փորձը: Ուսումնական գործընթացում ուսուցման, դաստիարակման և ուսանողների ընդհանուր զարգացման դրսևորման միասնության արդյունավետությունը որոշվում է կենսաբանական կրթության բովանդակության և ուսուցման տարաբնույթ մեթոդների օբյեկտիվ հնարավորություններն օգտագործելու դասախոսի ունակությամբ:

Ուսուցման դաստիարակման և զարգացման խնդիրների առավել արդյունավետ լուծման նպատակով ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում դասավանդվող բոլոր առարկաների ծրագրերը ենթարկվել են զգալի վերամշակման: Դա կատարվել է

ամբիոններում, քննարկվել ֆակուլտետի մեթոդական և գիտական խորհուրդներում: Ծրագրերի կատարելագործման նպատակով նրանցից հնարավորինս դուրս է հանվել երկրորդական, պարզունակ նյութը, և շեշտը դրվել է ավելի բարդ հարցերի՝ կենսաբանական գիտությունների ժամանակակից նվաճումների և հիմնարար ու կիրառական բնույթի հիմնախնդիրների վրա: Կարևորվել են նյութի աստիճանական խորացումը, գործնական խնդիրները (առաջադրանքները) և միջառարկայական կապերը: Արդյունքում՝ զգալիորեն բարձրացել է ուսանողների գիտելիքների որակը, ինչը դրսևորվում է ավարտական քննությունների ընթացքում:

Կենսաբանական գիտությունների յուրացման ընթացքում ուսանողները պետք է ձեռք բերեն ինքնուրույն աշխատելու հմտություններ, ինչը հնարավորություն կտա նրանց հետագայում առաջադրել տեսական և կիրառական նշանակություն ունեցող հիմնահարցեր, ուսումնառության տարիներին և հետագայում իրականացնել միջազգային ստանդարտներին (չափանիշներին) համապատասխանող գիտական հետազոտություններ:

Կատարելագործված ծրագրերում ձևակերպված խնդիրների լուծման արդյունավետությունը մեծապես կապված է ուսման տարբեր տարիների ընթացքում անցած առարկաների միջև կապերի իրացման հետ, ինչի հիման վրա էլ պետք է ձևավորվի գիտական աշխարհայացք: Միջառարկայական կապերն արտացոլում են շրջակա միջավայրի, կենդանիների, բույսերի, սնկերի և մանրէների կենսաբազմազանության, մարդկային հասարակության օբյեկտիվ կապերը և հիմք ստեղծում բարձր որակավորմամբ մասնագետներ արդյունավետ պատրաստելու համար:

Կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* մասնագիտության բակալավրի *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի ՄԿԾ-ների դասախոսներն իրենց մասնագիտական գործունեության ընթացքում կիրառում են այն մեթոդները, որոնք առավելագույնս նպաստում են պարապմունքների սկզբում իրենց կողմից դրված ուսումնական խնդիրների լուծմանը: Ուսանողներին ուսումնախմացական գործընթացում ներգրավելու առավել արդյունավետ միջոցներից են արդեն նշված դասավանդման և ուսուցման ակտիվ մեթոդները: Առաջիկա տարիներին նախատեսվում է համալրել ֆակուլտետի լսարանները համապատասխան տեխնիկական միջոցներով և համակարգիչներով, այդ թվում՝ ցուցադրական տեխնիկայով, իսկ լաբորատորիաները՝ նոր սարքավորումներով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.3.

ՄԿԾ-ների շրջանակներում առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ

Բակալավրի և մագիստրոսի կրթական վերջնարդյունքների և եվրոպական ծրագրային կողմնորոշիչների հենքի վրա կառուցված ՄԿԾ-ները, որոնք բավարարում են բակալավրի և մագիստրոսի որակավորումներին եվրոպական և ազգային շրջանակների կողմից ներկայացվող պահանջներին, նպաստում են դասավանդման և ուսումնառության գործընթացների բարելավմանը, նախանշում մշտադիտարկման հնարավորություններ:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման բավականին գործուն մեխանիզմներ, որոնք արմատական բարեփոխումների ընթացքում վերամշակվում են և կատարելագործվում: Դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման մեխանիզմներից կարևորագույնները ուսանողների հարցումներն են և դասալսումները:

1. Ուսանողների հարցումների կազմակերպումը:

Դասախոսների մասնագիտական առաջընթացին նպաստում են նաև դասախոսների մասին մի շարք ցուցանիշների ընդգրկմամբ ուսանողների անանուն հարցումները, որոնք կիրառվում են ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում համալսարանական մակարդակով ընդունված կարգով: Ուսանողների հարցումների հարցաշարն ընդգրկում է դասախոսի գործունեության տարբեր կողմերը, որոնց ծանոթանալով, դասախոսը հնարավորություն է ստանում դիտարկել իր դասավանդումն ուսանողի աչքերով, վեր հանել դասախոսության մինչ այդ իր կողմից չնկատված թերացումները, ինչը, անկասկած, նպաստում է դասախոսությունների և հատկապես դասավանդման և ուսումնառության մեթոդների բարելավմանը և ընդհանուր առմամբ դասախոսի գործունեության որակի բարձրացմանը:

Հարցումներն անցկացվում են յուրաքանչյուր կիսամյակում և վերլուծվում են համալսարանական մակարդակով. յուրաքանչյուր դասախոսին տրվում է միջին գնահատական:

Ուսանողների հարցումների արդյունքները քննարկվում են ֆակուլտետի ղեկնատում, ղեկանի, նրա տեղակալների և ամբիոնների վարիչների կողմից: Այս կամ այն դասախոսի վերաբերյալ ուսանողների մեծ մասի կողմից կրկնվող քննադատությունները, դասախոսներին տրվող ցածր գնահատականները, դասախոսությունների չափից ավելի բարդությունը կամ պարզունակությունը, դասախոսի ոչ վայելուչ պահվածքը և այլ թերացումները քննարկվում են ամբիոնների նիստերում, անհրաժեշտության դեպքում ամբիոնի վարիչը և ղեկանը զրուցում են տվյալ դասախոսի հետ, ինչը մեծապես նպաստում է թերացումների վերացմանը և ընդհանուր առմամբ դասավանդման որակի բարձրացմանը: Որոշ դեպքերում ուսանողների առաջարկությունները կենսաբանության տարբեր դասընթացների դասախոսությունների կամ լաբորատոր/գործնական պարապմունքների վերաբերյալ կարող են հիմք հանդիսանալ դասընթացի ծրագրային փոփոխությունների համար՝ առանձին բաժինների վերաբերյալ դասախոսությունների, սեմինարների կամ լաբորատոր աշխատանքների ժամաքանակի փոփոխության առումով:

Այդ հարցումները բնականաբար սուբյեկտիվ են, սակայն ընդհանուր առմամբ տալիս են տեղեկատվություն, որը դրական նշանակություն ունի դասավանդման և ուսուցման մեթոդների կատարելագործման հարցում:

Հետագայում նախատեսվում է մշակել և իրականացնել հարցումներ ՄԿԾ-ների, դրանց առարկայական ցանկի և բովանդակության, դասախոսական և գործնական կամ լաբորատոր պարապմունքների համամասնության և այլ հարցադրումներով:

2. Դասալսումների կազմակերպումը:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում կարևորվում են դասալսումները, որոնք ներառվել են ամբիոնների ուսումնական բեռնվածություններում որոշակի ժամաքանակով՝ կախված դասախոսների թվաքանակից: Դասալսումները հատկապես կարևոր են երիտասարդ դասախոսների, համատեղությամբ աշխատող նվազ փորձառություն ունեցող մասնագետների համար: Դասալսումներն իրականացնում են ամբիոնների վարիչները, ովքեր կարող են ընգրկել նաև փորձաշատ դասախոսներին:

Դասալսումների մասին կարծիքը ներկայացվում է ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի քննարկմանը: Այդ կարծիքում նշվում են դասախոսության կամ լաբորատոր/գործնական պարապմունքների արդիականությունը, բովանդակության խորությունը, դասի անցկացման ձևը, ուսանողների մասնակցությունը, ուսանողների ակտիվության աստիճանը, դասի ընթացքում առավել հաճախ բարձրաձայնվող հարցերը, ինչպես նաև դասի ընթացքում կատարված թերությունները և դասախոսության ներդրումները:

Դասալսումների քննարկման արդյունքներն ամփոփելուց հետո յուրաքանչյուր դասախոս, հաշվի առնելով կատարված դիտողությունները, հնարավորություն ունի շտկելու նկատված թերությունները և բարձրացնելու իր դասախոսությունների որակը, ինչպես նաև իր աշխատանքում կիրառելու ամբիոններում առկա դասավանդման տասնյակ տարիների փորձը:

Ամբիոններում իրականացվող դասալսումները նախանշում են դասախոսական անձնակազմի գնահատման քաղաքականությունը: Արդյունքները պարբերաբար, հինգ տարին մեկ, եզրափակվում են մրցութային ընթացակարգով, ի մի բերելով դասախոսի ընդհանուր գործունեությունը, հաշվի է առնվում նրա գործունեության դրականն ու բացասականը, ինչը երբեք նպաստում է դասախոսի գործունեության որակի ապահովմանը և զարգացմանը:

Սակայն անհրաժեշտ է նշել նաև, որ, ցավոք, կենսաբանության ֆակուլտետի բակալավրի *Կենսաբանություն* և մագիստրոսի *Գենետիկա* ՄԿԾ-ներում կիրառվող դասավանդման և ուսուցման մեթոդների ընտրությունը, ինչպես նաև դրանց գնահատման և բարելավման մեխանիզմները դեռևս լիարժեք կերպով պայմանավորված չեն համապատասխան դասընթացի (ուսումնական մոդուլի) ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթով:

3. Դասախոսների որակավորման բարձրացման կազմակերպումը:

Դասավանդման և ուսումնառության գործընթացները բարելավելու առումով կենսաբանության ֆակուլտետում մեծուշադրություն է դարձվում դասախոսների

որակավորման բարձրացմանը:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դասախոսների որակավորման բարձրացումն իրականացվում է համալսարանական մակարդակում ընդունված կրեդիտային համակարգով հնգամյա կրթագիտական ծրագրի շրջանակներում, որի մասին մանրամասններ կայացված է չափորոշիչ 2.2-ում: Այդ ծրագրում ընդգրկված են ամբիոնների մինչև 60 տարեկան բոլոր հիմնական դասախոսները: Հաշվի են առնվում ինչպես դասախոսների մասնակցությունը տարբեր դասընթացներին, այնպես էլ նրանց ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության արդյունքները: Դասավանդման և ուսումնառության մեթոդների բարելավմանը նպաստակառուղոված է դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի կրթական կառուցամասի “Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ” պարտադիր առարկան (1 կրեդիտ): Ուշադրություն է դարձվում նաև դասախոսների կողմից ուսումնամեթոդական գրականության ստեղծմանը և գիտական աստիճանների հայցման ատենախոսությունների պատրաստմանը: Օրինակ, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների համար սահմանված են 10-ական կրեդիտներ, իսկ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունների համար համապատասխանաբար 10 և 6 կրեդիտներ: Հատկանշական է ծրագրի թափանցիկությունը, արդյունքների տեղադրումը համացանցում:

2012-13թթ ուս.տարում մշակվել են “Կենսաբանության արդի հիմնախնդիրները” պարտադիր (20 ժամ) և այլընտրանքային երկու մասնագիտական առարկաների ծրագրեր, որոնց իրականացումն ապահովելու են առաջատար, փորձառու գիտնական-մասնագետները՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ամբիոնների վարիչները:

ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրի *Կենսաբանություն* և մագիստրոսի *Գենետիկա ՄԿԾ*-ները հնարավորինս կատարելագործվել են և դարձել համահունչ միջազգային չափանիշներին, ինչը դասավանդման և ուսումնառության ակտիվ մեթոդների ներդրման և միջազգային փորձի հաշվին ուսանողներին հնարավորություն է տալիս ստանալու ավելի խորը գիտելիքներ և դառնալու ավելի լավ մասնագետներ, ինչպես նաև նրանց ընդգրկվելու ֆակուլտետի գիտահետազոտական լաբորատորիաների գիտական աշխատանքներում: Դա հստակերևում է ուսանողների հարցումների արդյունքներից, քանի որ հարցաշարն ընդգրկում է դասախոսի գործունեության տարբեր կողմերը, որոնց ծանոթանալով, դասախոսը հնարավորություն է ստանում դիտարկել իր դասավանդումն ուսանողի աչքերով, վեր հանել դասախոսության մինչ այդ իր կողմից չնկատված թերացումները, ինչը նպաստում է դասախոսությունների և հատկապես դասավանդման և ուսումնառության գործընթացների բարելավմանը և, ընդհանուր առմամբ, դասախոսի գործունեության որակի բարձրացմանը:
2. ՄԿԾ-ների վերանայման արդյունքում նախատեսվել են բոլոր առարկաների դասավանդման և ուսուցման նոր մեթոդներ, որոնցում աստիճանաբար մեծանում է

ակտիվ մեթոդների բաժնեմասը, տեխնիկական միջոցների և համակարգչային ծրագրերի օգտագործումը:

3. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում մշակվել են և իրականացվում են դասավանդմաննուսումնառությանգործընթացներիգնահատմաննբարելավմանմեխանիզմներ, որոնցից են դասախոսների որակավորման բարձրացումը, դասալսումները, ուսանողների անանուն հարցումները:

ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետիբակալավրի *Գենսաբանություն* և մագիստրոսի *Գենետիկա ՄԿԾ*-ներում կիրառվող դասավանդման և ուսուցման մեթոդների ընտրությունը, ինչպես նաև դրանց գնահատման և բարելավման մեխանիզմները դեռևս լիարժեք կերպով պայմանավորված չեն համապատասխան դասընթացի (ուսումնական մոդուլի) ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթով: Բավարար չէ ուշադրությունը դասալսումներին, ուսանողների հարցումներում անհրաժեշտ են նոր հարցադրումներ:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում ոչ բոլոր լսարաններն են և լաբորատորիաները հագեցված համապատասխան տեխնիկական միջոցներով և համակարգիչներով, այդ թվում՝ ցուցադրական տեխնիկայով, ինչը հնարավորություն չի տալիս մեծացնելու հիմնախնդրային և տեսանելիացված դասախոսությունների բաժնեմասը: Նշված թերացման լրացման նպատակով նախատեսվում են համապատասխան աշխատանքներ:
3. Ֆինանսական միջոցների սղության պատճառով ֆակուլտետի միջազգային գործունեությունը սահմանափակ է և չի տարածվում պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմի վրա: Բացի այդ փոքր է առաջատար համալսարաններից դասախոսների հրավիրման և փոխանակման հնարավորությունը: Նշված բացթողումը հաղթահարելու նպատակով տարբեր համալսարանների առաջատար պրոֆեսորներին առաջարկվել է միջազգային ծրագրերի շրջանակներում 2-4 ամիս ժամկետով հյուրընկալելու և դասախոսելու ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում:

ՉԱՓԱՆԻՇ 4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, որը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.1.

ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.3.

ՄԿԾ-ի շրջանակներում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերի շրջանակներում կիրառվում է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման բազմիցս վերանայված (վերջին անգամ հաստատվել է ԵՊՀ Գիտական խորհրդի 02.06.2011 թ., թիվ 6 նիստում) բազմագործոն համակարգը: Այն սահմանում է ուսումնական մոդուլների բնույթով պայմանավորված ընթացիկ և եզրափակիչ գնահատման ձևերը (գրավոր կամ բանավոր քննություն/ստուգում), ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցերը և իրականացման ընթացակարգերը, գնահատման 20 միավորանոց սանդղակը, քննությունների արդյունքների բողոքարկման, քննությունների վերահանձնման ընթացակարգերը և ժամանակացույցը, ինչպես նաև ավարտական ատեստավորման կարգն ու գնահատման չափանիշները: Համաձայն այս կարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողի արդյունաբար գնահատականը ձևավորվում է մի շարք բաղադրիչ գնահատումներից՝ կիսամյակի ընթացքում դասընթացին ուսանողի մասնակցությունից, դասընթացի ենթաբաժինների և առաջադրանքների կատարման 2 ընթացիկ ստուգումից կամ գնահատումից, դասընթացի եզրափակիչ գնահատումից:

Կենսաբանություն բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացն իրականացվում է համաձայն վերոնշյալ կարգով սահմանված դրույթների և պահանջների, սակայն էլնելով *Կենսաբանություն* և *Գենետիկա* կրթական ծրագրերում սահմանված կրթական վերջնարդյունքների բնույթից սահմանվում են այսպես կոչված “գիտելիքների գնահատման լրացուցիչ պահանջներ”: Այսպես, *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումն իր մեջ ներառում են ոչ միայն ընթացիկ գրավոր և բանավոր հարցումներ և քննություններ, այլև կրթական մոդուլի կրթական վերջնարդյունքներից էլնելով՝ լաբորատորիայում այս կամ այն հետազոտական մեթոդը կիրառելու գիտելիքների և հմտությունների ստուգում և գնահատում: Ուսանողների գործնական/լաբորատոր գիտելիքների ստուգումը և գնահատումը բակալավրիատում իրականացվում է գլխավորապես բանավոր ավարտական

քննությունների ժամանակ մոդուլը վարող դասախոսի և լաբորատոր աշխատանքները վարող դասախոսի/ների/ մասնակցությամբ, երբ գնահատվում են ուսանողների ինչպես տեսական գիտելիքները, այնպես էլ լաբորատոր/գործնական հմտությունները՝ անմիջապես լաբորատորիայում հանձնարարություն կատարելով կամ լաբորատոր պարապմունքները վարող դասախոսի եզրակացությունների հիման վրա: Այսպես օրինակ՝ “Էկոլոգիա և ռացիոնալ բնօգտագործում” բակալավրի կրթական մոդուլի եզրափակիչ բանավոր քննությանը 20 միավորանոց սանդղակով հատկացվող 10 միավորը ձևավորվում է լաբորատոր աշխատանքները վարող դասախոսի հարցումից և եզրակացությունից, և տեսական գիտելիքների ստուգումից: Նման կերպով հաշվարկվում է նաև ուսանողի մասնակցությունը դասընթացին, այսինքն 20 միավորանոց սանդղակով մասնակցությանը հատկացվող 2 միավորները ուսանողը վաստակում է և՛ դասախոսությունների, և՛ լաբորատոր պարապմունքներին այցելությունների գումարային հաշվարկից, որի կատարման ընթացակարգը մանրամասնորեն ներկայացված է վերոնշյալ կարգում: Մագիստրոսի կրթական ծրագրում մեծանում է լաբորատոր/գործնական հմտությունների գնահատման մասնաբաժինը, որը նույնպես պայմանավորված է կրթական վերջնարդյունքներով:

Գնահատման չափանիշները և ձևերը հասանելի են թե՛ դասախոսներին, և թե՛ ուսանողներին, ամբիոններում դասախոսների համար հասանելի գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգի առկայությամբ, ինչպես նաև ուսանողներին տրամադրվող ուսումնառության ուղեցույցներում և ծրագրի տեղեկագրքերում գետեղված դասընթացների նկարագրիչներում: Կրթական վերջնարդյունքներին համապատասխան գնահատման ձևերը և մեթոդները տրված են նաև վերոնշյալ կրթական ծրագրերի մասնագրքերում (Տես հավելվածներ 1 և 2):

Հարկ է նշել սակայն, որ չնայած *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերում գնահատման չափանիշները որոշակիորեն հիմնված են կրթական վերջնարդյունքների վրա, մասնավորապես երբ գնահատվում են գործնական/լաբորատոր հմտությունները և գիտելիքները, այնուամենայնիվ դրանք չի կարելի կրթական վերջնարդյունքների վրա լիարժեքորեն հիմնված համարել: Այս հանգամանքը, նշված է նաև ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի 3.3 չափորոշիչում:

Ուսանողների գնահատման գործող համակարգի արդյունավետության և օբյեկտիվության վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում է ուսանողների և շրջանավարտների հարցումների հետադարձ կապի օգնությամբ, որոնք մանրամասնորեն նկարագրված են ինստիտուցիոնալ ինքնավերլուծության զեկույցի 3.5 և 5.3 չափորոշիչներում:

Բացի այդ ԵՊՀ-ում TEMPUS “Development and Integration of University Self-Assessment Systems” ծրագրի շրջանակներում մշակվել և փորձարկվել է նաև ուսանողների գնահատման գործող համակարգի գնահատման գործիքամիջոց, որը ներառում է ուսանողներին և դասախոսներին ուղղված հարցաշարեր և համապատասխան ընթացակարգ: Փորձական եղանակով կենսաբանության ֆակուլտետում իրականացվել են հարցումներ, որոնց մասնակցել է 169 ուսանող, այդ թվում *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողներ և 38 դասախոս: Գնահատումները

կազմակերպվել են նախապես կազմված հարցաշարերով՝ նախատեսված ուսանողների և դասախոսների համար: Հարցաշարերը թույլ են տվել վերլուծելու ուսանողների կարծիքները գնահատման չափանիշների, մեթոդների և եղանակների, գնահատման արդյունավետության վերաբերյալ: Գնահատվել է նաև դասախոսների կարծիքը՝ գնահատման եղանակների և մեթոդների, արդյունավետության վերաբերյալ, այդ արդյունքների կիրառելիությունը դասավանդման և ուսումնառության մեթոդների կատարելագործման և արդյունավետությունը բարձրացնելու համար:

Այս վերլուծությունը հնարավորություն է տվել վերհանելու գնահատման գործող համակարգի հիմնական թերությունները՝ բարելավող միջոցառումներ իրականացնելու նպատակով, որոնք ներառում են դասախոսների կողմից գնահատման համապատասխան մեթոդների ընտրություն և չափանիշների ձևավորում:

Հիմք ընդունելով վերը նկարագրված գործընթացները, ինչպես նաև ուսանողների գնահատման համակարգը ՈԱ Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը՝ ներկայումս ԵՊՀ-ում ձեռնարկվել է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համակարգի բարեփոխման գործընթաց, որը նկարագրված է ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի չափորոշիչ 3.3-ում: Միաժամակ կենսաբանության ֆակուլտետում ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ, մասնավորապես ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի և ամբիոններինիստերին քննարկվում և գնահատվում է տվյալ մոդուլի կրթական վերնջարդյունքների և գիտելիքների ստուգման ու գնահատման չափանիշների համապատասխանությունը, ինչը ինքնաստիճանի տարածում է դրական փորձը և գիտելիքները դասախոսների շրջանակում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.2.

ՄԿԾ-ի շրջանակներում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ:

ԵՊՀ-ում որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատող մեխանիզմներ են՝ ուսանողների մասնագիտական ամփոփոխյ քննությունը և ավարտական և մագիստրոսական թեզի պատրաստումը և պաշտպանությունը: Այսպես, կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* բակալավրի կրթական ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռք բերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ և ծրագրի ավարտից հետո կազմակերպվող մասնագիտական ամփոփիչ քննությամբ: *Կենսաբանություն* բակալավրի 25 ավարտական աշխատանքներ և *Գենետիկա* մագիստրոսի 25 մագիստրոսական թեզեր, որպես օրինակ, ներկայացվում են հավելված 4-ում: *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է մագիստրոսական թեզի կատարումով և պաշտպանությամբ: Այս գործընթացները

կարգավորվում են ԵՊՀ կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգով (վերջին անգամ հաստատվել է ԵՊՀ Գիտական խորհրդի 02.06.2011 թ., թիվ 6 նիստում): Այս կարգով կրթական ծրագրերի եզրափակիչ ատեստավորման համակարգը բակալավրի մակարդակում սահմանում է ավարտական աշխատանքի ղեկավարի հաստատման, թեմայի ընտրության, աշխատանքի կատարման ժամկետները, հաստատման ընթացակարգը, պաշտպանության ժամկետները, ավարտական քննության անցկացման ժամկետները, գնահատման սանդղակը և ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշները: Մագիստրոսի մակարդակում սահմանվում են մագիստրոսական թեզի ղեկավարի հաստատման, թեմայի ընտրության, թեզի կատարման ժամկետները, հաստատման ընթացակարգը, պաշտպանության ժամկետները, գնահատման սանդղակը և մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր որակական չափանիշները: Բակալավրի ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գնահատման ընդհանուր չափանիշներն են արդիականությունը/նորույթը, ներկայացմանորակը, ձևակերպմանորակը, կատարման ինքնուրույնության աստիճանը: Սակայն, այս չափանիշները շատ ընդհանրական են և թույլ չեն տալիս բազմակողմանի և լիարժեք գնահատել *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերով համապատասխան որակավորումներ շնորհելու նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը: Այս ուղղությամբ կենսաբանության ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհուրդը մշակում է ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների գնահատման ֆակուլտետային “ենթաչափանիշներ”, որոնք նախատեսվում է ներդնել 2013/2014թթ ուսումնական տարում: Այդ ենթաչափանիշները ներառում են չափանիշում բաղդատված ենթաչափանիշների առկայություն: Այսպես օրինակ, ձևակերպմանորակը չափանիշը ներառում է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ներածական մասի բովանդակության և աշխատանքի թեմայի համապատասխանությունը, աշխատանքի “Նյութեր և մեթոդներ” բաժնում կիրառված հետազոտական մեթոդների նկարագրության մանրամասնությունը, “Արդյունքներ և քննարկում” բաժնում ուսանողի կողմից քննադատական և վերլուծական մոտեցումներ ցուցաբերելու կարողությունը, գրականության ցանկի ձևավորումը և այլ “ենթաչափանիշներ”: Նման մոտեցումը թույլ կտա հստակ, անաչառ և բազմակողմանի գնահատել որակավորումների շնորհման նպատակով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռք բերումը: Մագիստրոսական թեզի, ավարտական աշխատանքի պաշտպանությունը և մասնագիտական ամփոփիչ քննության անցկացումն իրականացվում են համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգի:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.4.

ՄԿԾ-ի շրջանակներում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.5.

ՄԿԾ-ի շրջանակներում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում, ինչպես և ԵՊՀ այլ ֆակուլտետներում 1995/96թթ երկաստիճան կրթական համակարգին անցումը գիտելիքների ստուգման և գնահատման նոր մոտեցումների ներդրման անհրաժեշտություն առաջացրեց: Ներդրվեց գրավոր քննությունների համակարգը, ինչը նոր քայլ էր գնահատման անաչառությունն ապահովելու համար: Այդ տարիների ընթացքում եղան բազմաթիվ քննարկումներ, առաջարկություններ՝ կապված ստուգումների և քննությունների անցկացման ձևերի, ինչպես նաև գնահատման անաչառության հետ: Դրանց արդյունքում ԵՊՀ-ում ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործող կարգը վերանայվեց 2011 թ-ին, որն էլ հիմք հանդիսացավ կենսաբանության ֆակուլտետում գնահատման համակարգում համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Ինչպես արդեն նշվել է չափորոշիչ 4.1.-ում, ուսանողների գիտելիքների գնահատման ընթացակարգերը, ներառյալ բողոքարկման ընթացակարգերը, քննությունների վերահանձնման ընթացակարգը և ժամանակացույցը, ուսանողների իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են ԵՊՀ կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգով (վերջին անգամ հաստատվել է ԵՊՀ Գիտական խորհրդի 02.06.2011 թ., թիվ 6 նիստում): Համաձայն այս կարգի սահմանվում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) երկու շրջան, որոնց ընթացքում ստուգարքների և քննությունների վերահանձնումը, կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են ղեկանի հրամանով: Նման մոտեցումը երաշխավորում է գնահատման անաչառությունը: Կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողները իրազեկվում են ծրագրերի ղեկավարների և խորհրդատուների կողմից իրենց իրավունքների մասին: Այսպես ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգումների գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև ֆակուլտետի ղեկանին: Սակայն, TEMPUS “Development and Integration of University Self-Assessment Systems” ծրագրի շրջանակներում անցկացված ուսանողական հարցումները ցույց են տվել, որ ուսանողները և դասախոսները համարում են գանգատարկման համակարգը անկատար և գնահատում են այն 5 բալանոց սանդղակով 3.44 և 3.8 միավոր համապատասխանաբար:

Այս ուղղությամբ, որպես առաջին քայլ, ԵՊՀ-ում ստեղծվել են ուսանողների արժանահավատ և հուսալի գնահատման մեթոդաբանական հիմքերը: Մասնավորապես, մշակվել և հրատարակվել է (2012թ.) «Ուսանողի գնահատման ԵՊՀ ուղեցույցը», որի նպատակն է բարձրացնել գիտելիքների ստուգման և գնահատման և համապատասխանաբար գանգատարկման գործընթացների թափանցիկությունը: Գնահատման այս նոր համակարգը նախագծվում է ներդնել *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերում 2013/2014թթ ուստարում: Այդպիսի գնահատման համակարգը հնարավորություն կտա նաև կապակցելու և համապատասխանեցնելու գնահատման մեթոդները դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդներին, իսկ գնահատման չափանիշները՝ դասընթացի կրթական վերջնարդյունքներին: Գնահատման նոր մեթոդաբանության մշակումը և փորձարկումը նկարագրված է ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի չափորոշիչ 3.3-ում:

Գնահատման գործընթացում ակադեմիական ազնվությունը պահպանելու և գրագողության դեմ պայքարելու նպատակով *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերի գրավոր քննություններն անցկացվում են կնքված հատուկ տետրերում, բանավոր քննությունները և բոլոր լուծարքներն ընդունում են քննական հանձնաժողովները, իսկ ամփոփիչ ավարտական քննությունները տեսաձայնագրվում են: Այս բոլոր գործընթացները կազմակերպվում են և վերահսկվում կենսաբանության ֆակուլտետի ղեկանատի և ԵՊՀ ուսումնական գործընթացների վերահսկման բաժնի կողմից:

Ակադեմիական ազնվությանը նպաստում է նաև այն, որ կենսաբանության ֆակուլտետի ուսանողների ներկայացուցիչները ներգրավված են ֆակուլտետիկառավարման բոլոր միավորներում և ունեն իրենց որոշիչ ձայնը (տե՛ս չափանիշ 7):

Կենսաբանություն բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերը կառուցված են այնպես, որ խթանում են ուսանողների ուսումնագիտական ինքնուրույնությունը: Այսպես բակալավրի կրթական ծրագրով նախատեսված են ուսանողների կողմից որոշակի կրեդիտատարությամբ երկու կուրսային աշխատանքների, ինչպես նաև ավարտական աշխատանքի կատարում և ներկայացում, որոնք գնահատվում են ուսանողի ղեկավարի և քննական հանձնաժողովի անդամների կողմից: *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրում մեծանում է ուսանողների ինքնուրույն ուսումնագիտական գործունեություն ծավալելու մասնաբաժինը: Այսպես, *Գենետիկա* մագիստրոսական կրթական ծրագրում ներառվում է մագիստրոսի ինքնուրույն աշխատանք կատարելը իր ղեկավարի հետ համատեղ ընտրված թեմայի շուրջ, ավարտական մագիստրոսական թեզը, գիտական սեմինարներին մասնակցությունը, և ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելը, որոնց համար հատկացվում են որոշակի կրեդիտներ և կատարվում է աշխատանքների գնահատում ղեկավարի և քննական հանձնաժողովի անդամների կողմից:

Կենսաբանության ֆակուլտետում ուսանողների ուսումնագիտական ինքնուրույն գործունեությունը և գրագողության դեմ պայքարը խթանող նոր մեխանիզմ է՝ «Կիրառական կենսաբանություն» ուսանողական միջազգային էլեկտրոնային ամսագրի ստեղծումը և ներդրումը, որը սկսած 2012 թվականից հրատարակում է ուսանողների լավագույն կուրսային

աշխատանքների, ինքնուրույն և հետազոտական աշխատանքների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի արդյունքները, ինչպես նաև Powerpoint ցուցադրումները և տեսագրությունները: Ամսագիրը մշակվել է TEMPUS MAPB ծրագրի շրջանակներում հասանելի է բոլոր դասախոսներին և ուսանողներին, ոչ միայն Հայաստանում, այլև Վրաստանում և Եվրոպական երկրներում: Այս հանգամանքն ինքնին խթանում է ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

Ուսանողների ինքնուրույն գործունեությունը խթանում են նաև կենսաբանության ֆակուլտետում ակտիվ գործող ուսանողական գիտական խորհրդի կողմից կազմակերպվող գիտական սեմինարները և կոնֆերանսները, որոնց կազմակերպմանը նպաստում են կենսաբանության ֆակուլտետի ղեկանատը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

ՁԵՆՍԱՐՔԵՐՈՒՄՆԵՐԸ

1. *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերում առկա են գործնական/լաբորատոր հմտությունների գնահատման հստակ պահանջներ, որոնք բխում են կրթական վերջնարդյունքներից:
2. *Կենսաբանություն* բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերի ուսանողները իրազեկված են գանգատարկման ընթացակարգերին և ծանոթ են իրենց իրավունքներին՝ ծրագրերի ղեկավարների և խորհրդատուների արդյունավետ աշխատանքի շնորհիվ:
3. Կենսաբանության ֆակուլտետում արդյունավետորեն կիրառվում են գիտելիքների ստուգման և գնահատման անաչառությունն ապահովող, ԵՊՀ-ում գործող մեխանիզմները:
4. Կենսաբանության ֆակուլտետում արդյունավետորեն գործում են ուսանողների ինքնուրույնությունը խթանող մեխանիզմներ, որոնք մշակվել են ինչպես ԵՊՀ մակարդակում, այնպես էլ ֆակուլտետային մակարդակում, ինչպիսին է օրինակ՝ “Կիրառական կենսաբանություն” ուսանողական էլեկտրոնային միջազգային ամսագիրը:

ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ

1. Գիտելիքների ստուգման և գնահատման չափանիշները լիարժեքորեն հիմնված չեն կրթական վերջնարդյունքների վրա: Այս խնդրի լուծման նպատակով դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրում նախատեսված է նաև «Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ» հատուկ դասընթացը:
2. Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի գնահատման չափանիշները հստակ չեն և թույլ չեն տալիս բազմակողմանի և լիարժեք գնահատել ուսումնական վերջնարդյունքների ձեռքբերումը: Այսուղղությամբ, կենսաբանության ֆակուլտետում շակվում են "Ենթաչափանիշներ", որոնք պայմանավորված են ավարտական աշխատանքների բնույթով և ակնկալվող կրթական վերջարդյունքներով: Նախատեսվում է ԵՊՀ Գիտական խորհրդի հետ քննարկումներից հետո 2013/2014 ուստարիներին դրանք ներդնել կենսաբանության ֆակուլտետում:
3. Ուսանողական և դասախոսական շրջանակներում անցկացվող հարցումների արդյունքները վկայում են գանգատարկման համակարգի անկատարության մասին: Այս խնդրի լուծումն արտացոլված է "Ուսանողի գնահատման նոր ուղեցույցում", որը ԵՊՀ-ն մշակել է 2012թ և նախատեսում է կենսաբանության երկու ծրագրերի մակարդակներում ներդնել 2013/2014թթ ուս տարիներին:

ԶԱՓԱՆԻՇ 5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական և ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև:

ԶԱՓՈՐՈՇԻՉ 5.1.

ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակում ՄԿԾ-ների շրջանակներում հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության մոտեցումներում կատարվել են մի շարք բարեփոխումներ՝ համալսարանական մակարդակում տեղի ունեցող այն բարեփոխումներին համահունչ, որոնք մանրամասնորեն նկարագրված են ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի 6-րդ չափանիշում: Դրանք բխում են բարձրակարգ հետազոտությունների և նորարարությունների վերաբերյալ ԵՊՀ ռազմավարական զարգացման ծրագրի (2010-2014թթ.) դրույթներից:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակում ՄԿԾ-ների շրջանակներում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև, ինչի գրավականն է ուսանողների ներգրավվածությունը ամբիոններում իրականացվող գիտական հետազոտություններում:


Նշված ՄԿԾ-ների շրջանակում երկարաժամկետ ռազմավարությունը ենթադրում է ուսման առավել բարձր առաջադիմությամբ և հետազոտական ունակություններ ձեռքբերած ուսանողների գիտահետազոտական գործունեություն մագիստրատուրայում, իսկ հետագայում՝ նաև ասպիրանտուրայում:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակում ՄԿԾ-ների շրջանակում կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի նպատակն է ստեղծել կապ ուսման առաջին տարիներին ուսանողների կողմից ստացված գիտելիքների և ամբիոններում դասախոսների կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների միջև: Դա ինդիք ունի ապահովել երկարաժամկետ ծրագրով նախատեսվող հետազոտությունների ծավալի էական աճն հետազոտական նախագծերում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնում:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակում ՄԿԾ-ն ընդգրկում է հետազոտական կառուցման՝ «Գիտական սեմինար» և «Գիտահետազոտական աշխատանք» դասընթացներով, որոնց համար նախատեսված են համապատասխանաբար 12 և 18 կրեդիտներ:

Հետազոտությունների ոլորտում ԵՊՀ հետաքրքրությունները և հավակնությունները

իրագործվում են ամբիոնների, ինչպես նաև ֆակուլտետում գործող ընդհանուր կենսաբանության գիտահետազոտական բազային լաբորատորիայում, որում պետական ֆինանսավորմամբ իրականացվում են հետազոտություններ “Կազմավորման տարբեր մակարդակներ ունեցող կենսահամակարգերի գործունեության կարգավորման մեխանիզմները” թեմայով բուսաբանության և սնկաբանության, կենդանաբանության, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի, գենետիկայի և բջջաբանության, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնների գիտական ենթաթեմաներով: Լաբորատորիան ունի 37 հաստիք, որոնք ներկայումս բաշխված են 57 աշխատակիցների միջև: Դրանց թվում են ՀՀ ԳԱԱ մեկ ակադեմիկոս և երկու թղթակից անդամներ, գիտությունների վեց դոկտորներ և երեսուն թեկնածուներ (նկ. 1):



Նկ.5.1. Ընդհանուր կենսաբանության գիտահետազոտական բազային լաբորատորիայի աշխատակիցների թիվը

Ֆակուլտետում գործում է նաև Սնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի գիտահետազոտական բազային լաբորատորիա՝ 5 հաստիքներով, որտեղ աշխատում է գիտությունների մեկ դոկտոր և մեկ թեկնածու:

Այս երկու գիտահետազոտական ստորաբաժանումների հետագա զարգացումը պետք է ապահովի արդեն նշված երկարաժամկետ ծրագրի հիմնական խնդրի իրականացումը, որի համար կարող են մշակվել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում գիտաօժանդակ ծառայություններով խոշոր գիտահետազոտական կառույցի ստեղծման կառուցվածքային բարեփոխումներ:

Որպես ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ռազմավարական նպատակ գիտահետազոտական գործունեության ոլորտում առավել կարևորվում է նոր գիտական թեմաների առաջարկումը և դրանց իրականացումը միջազգային ստանդարտներին

համապատասխանող մեթոդներով և նորագույն սարքավորումների կիրառմամբ: Դրան նպաստում է ԵՊՀ վերջին տարիների բնագիտական ֆակուլտետների գիտական սարքավորումներով վերազինման քաղաքականությունը. Ֆակուլտետի ամբիոնները և բազային լաբորատորիաները պարբերաբար համալրվում են նոր սարքերով և սարքավորումներով, որոնք օգտագործվում են ինչպես ուսումնական, այնպես էլ հետազոտական նպատակներով: Միայն վերջին երեք տարում ձեռք են բերվել շուրջ 59 մլն ՀՀ դրամին համարժեք գումարային արժեքի տարբեր սարքեր և սարքավորումներ, այդ թվում.

- Մանրադիտակներ, այդ թվում թվային ստերեո
- Լամինար բոքսեր
- Պրեցիզիոն կշեռքներ
- Ուլտրաձայնային հոմոգենիզատորներ
- Ցենտրիֆուգներ, այդ թվում սառնարանային
- Սպեկտրալուսաչափիչներ
- pH-չափիչներ և իոնաչափիչներ
- Հելիքի վերլուծական համակարգեր
- Էկոպոլիմերազային շղթայական տեակցիայի համակարգեր:

Այս աշխատանքներն էապես նպաստել են ֆակուլտետում գիտահետազոտական գործունեության զարգացմանը: Մակայն ՄԿԾ-ների սովորողները դեռևս լիովին ապահովված չեն սարքավորումներով, այդ թվում համակարգիչներով ինքնուրույն հետազոտություններ կատարելու համար: Խնդիր է հետազոտական աշխատանքային տարածքներով ուսանողների ապահովումը:


Ֆակուլտետի ամբիոնները և գիտահետազոտական լաբորատորիաները սերտորեն համագործակցում են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կենսաբանության բնագավառի համապատասխան գիտահետազոտական կազմակերպությունների (Բուսաբանության, Գ. Դավթյանի անվ. հիդրոպոնիկայի պրոբլեմների, Լ. Օրբելյանի անվ. Ֆիզիոլոգիայի, Մոլեկուլային կենսաբանության և այլ ինստիտուտներ, “Հայկենսատեխնոլոգիա”, Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոններ), ինչպես նաև Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) հետ, ինչը պայմանավորում է ֆակուլտետում իրականացվող գիտական հետազոտությունների առաջնահերթությունները հիմնարար հետազոտությունների ոլորտում և դրանց արդյունավետ կառավարումը: Այդ աշխատանքները նախատեսված են արդեն նշված ռազմավարական ծրագրում և խրախուսվում են, քանի որ դրանք ապահովում են արտաքին գիտահետազոտական ներուժի մագիստրոսական աշխատանքների ղեկավարման և կատարման մեջ ընդգրկումը, ուսանողների հետագա աշխատանքը գիտահետազոտական բնագավառում:

Հիմնարար հետազոտությունների ոլորտում ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գիտական գործունեությունն ուղղված է պահպանելու առաջատար դիրքերը

հանրապետությունում և ամրապնդելու միջազգային վարկանիշը: Մակայն գիտական գործունեությունը չի սահմանափակվում հիմնարար հետազոտություններով: Վերջին տարիներին խիստ կարևորվում է նաև փորձարարական հետազոտությունների ընթացքում ստացված արդյունքների կիրառական նշանակությունը արդյունաբերության, ագրարային, առողջապահության կայլ ոլորտներում:

Հետազոտական գործունեությանը և ֆակուլտետի վերազինմանը նպաստում է նաև առանձին ամբիոնների ներգրավվումը հետազոտական դրամաշնորհային ծրագրերում: Այսպես, վերջին 3 տարիներում իրականացվում են հետազոտություններ պետական ֆինանսավորմամբ 4 թեմատիկ դրամաշնորհներով, ինչպես նաև արտասահմանյան հետազոտական մի քանի դրամաշնորհներով:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Գենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակում ՄԿԾ-ներում դասավանդող դասախոսները և բազային լաբորատորիաների աշխատակիցները հրատարակում են իրենց հետազոտությունների արդյունքները ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային վարկանիշային գործոն ունեցող մասնագիտական պարբերականներում: Վերջին երեք տարում հրատարակվել են 355 գիտական աշխատություններ, որոնցից 219-ը արտասահմանում (նկ. 5.2):



Նկ. 5.2. Հրատարակված գիտական աշխատությունների թիվը՝ ըստ տարիների

Գիտահետազոտական գործունեության և ուսումնառության անմիջական կապի ապահովմանը նպաստում է ինչպես ամբիոնների ասպիրանտների, այնպես էլ *Գենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակում սովորող ուսանողների ներգրավվումը: Դրան օժանդակում են ասպիրանտների հետազոտությունների աջակցության պետական ծրագրով ասպիրանտների ստացած դրամաշնորհները: Դա պայմանավորված է նաև նրանով, որ բազային լաբորատորիաների համատեղությամբ աշխատակիցների մի մասը (17-ը) կազմում են դասավանդող դասախոսները: Որպես նպատակ պետք է ապահովվի գիտահետազոտական

նախագծերում մագիստրոսի մակարդակում սովորող ուսանողների, ինչպես նաև ասպիրանտների 25% մասնակցությունը:

Վերոնշյալ ՄԿԾ-ների ուսանողները հնարավորություն ունեն նաև ներկայացնելու իրենց հետազոտական աշխատանքի արդյունքները պարբերաբար կազմակերպվող ուսանողական գիտաժողովներում, ինչին մեծապես նպաստում է ֆակուլտետում գործող ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) ակտիվ գործունեությունը: Ուսանողների լավագույն աշխատանքները հրատարակվում են:

Սակայն քիչ են կազմակերպվում ուսանողների մասնակցությամբ գիտական արշավներ, չեն կազմակերպվում ամառային դպրոցներ, դասընթացներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.2.

ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակում ՄԿԾ-ների շրջանակներում հետազոտական աշխատանքներն իրականացնելու քաղաքականությունն ու ընթացակարգերը բխում են ՀՀ օրենսդրությանը և ԵՊՀ կանոնադրությանը համապատասխանող ԵՊՀ ծրագրային փաստաթղթերից (նշված են ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի 6-րդ չափանիշում), որտեղ հստակեցվում են գիտության զարգացման համար հատկացվող ֆինանսական միջոցների բաշխման հիմունքները: Դրանց նպատակն է զարգացնել գիտական ուղղությունները համապատասխան միջազգային պահանջներին, ինչն ապահովվում է գիտական նոր թեմաների, նորարարական մոտեցումների մշակմամբ և զարգացմամբ:

Այս ոլորտի առաջնահերթությունները տրվում են այն հետազոտություններին, որոնք կոչված են ներդրում կատարելու հանրապետության և այլ երկրների գիտահետազոտական հիմնախնդիրների լուծման մեջ, ինչը հնարավոր է իրականացնել համատեղ կարճաժամկետ և երկարաժամկետ նախագծերի ու միջհամալսարանական համաձայնությունների միջոցով:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում գործում է մասնագիտացված խորհուրդ (նշված ՄԿԾ-ներում դասավանդող դասախոսների անդամակցությամբ), որտեղ գործող կարգերի և ընթացակարգերի համաձայն պաշտպանվում են թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Գիտական աստիճանի հայցողները հնարավորությունն են պաշտպանելու իրենց գիտական ատենախոսությունները նաև հանրապետությունում գործող այլ մասնագիտացված խորհուրդներում: Դա նպաստում է հետազոտությունների զարգացմանը: Վերջին երեք տարում *Կենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակում ՄԿԾ-ներում դասավանդող դասախոսները և լաբորատորիաների գիտաշխատողները պաշտպանել են 3 դոկտորական և 19 թեկնածուական ատենախոսություններ: Ընդ որում գիտական աստիճանաշնորհման գործող կանոնակարգով դոկտորական ատենախոսություններին, բնականաբար, ներկայացվում են ավելի բարձր ցուցանիշներով չափորոշիչներ:

Նշված ՄԿԾ-ներում դասավանդող դասախոսները գործող կարգով և ընթացակարգերով հայցում են նաև գիտական կոչումներ: Վերջիններիս համար կարևորվում են գիտական և ուսումնասիրողական աշխատանքները: Վերջին երեք տարում պրոֆեսորի գիտական կոչում շնորհվել է 2 և դոցենտի՝ 12 դասախոսների:

ԵՊՀ Գիտական խորհրդում (2009թ.-ի նոյեմբերի 18-ի թիվ 7 նիստ) ստեղծվել և հաստատվել է պրոֆեսորադասախոսական կազմի կրթական ծրագրերի հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքների արդյունքների գնահատման կրեդիտային համակարգը, որը գործում է 2011թ.-ից: Նշված ՄԿԾ-ներում դասավանդող 30 դասախոսներ մասնակցում են այդ ծրագրին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.3.

ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակում ՄԿԾ-ների շրջանակներում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, որն իրականացվում է մի քանի ուղղություններով: Նախ, ուշադրություն է դարձվում հետազոտական գործունեության արդյունքների հրատարակմանը միջազգային բարձր վարկանիշային գործոն ունեցող մասնագիտական պարբերականներում (տե՛ս նկ. 5.1): Հաճախ այդ հոդվածներում որպես համահեղինակներ հանդես են գալիս համագործակցող գիտնականներ արտասահմանյան գիտական կենտրոններից: Առաջնորդվելով արդեն նշված ռազմավարական ծրագրի դրույթներով խրախուսվում է արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակումը:

Հատկանշական է նաև վերջին տարիներին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և գիտաշխատողների ընդգրկումը միջազգային հանդեսների խմբագրակազմերում: Այսպես, Մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. Անդամ, պրոֆ. Ա. Թոչունյանն ընգրկվել է J. Biophys. Chem., Amer. J. Life Sci. (ԱՄՆ), Frontiers in Microbiology (Շվեյցարիա), Scientifica Biophysics (Հնդկաստան) և այլ հանդեսների խմբագրակազմերում:

Կարևոր նշանակություն ունի նաև ֆակուլտետի դասախոսների և գիտաշխատողների, այդ թվում՝ երիտասարդ մասնագետների զեկուցումներով կամ հաղորդումներով մասնակցությունը տարբեր երկրներում անցկացվող բազմաթիվ միջազգային գիտաժողովներին: Այսպես, վերջին երեք տարում ԱՄՆ-ում, Գերմանիայում, Իտալիայում, Ռուսաստանում, Չինաստանում, Շվեյցարիայում և այլուր միջազգային գիտաժողովներին մասնակցել են ֆակուլտետի դասախոսները, գիտաշխատողները և ասպիրանտները: Այդ գիտաժողովների թվին են դասվում 9-րդ Միջազգային միկրոլոգիական կոնգրեսը (Էդինբուրգ, Շոտլանդիա, 2010), ԵԿԸԴ (FEBS) 35-րդ կոնգրեսը (Գյոթեբորգ, Շվեդիա, 2010), Եվրոպական միկրոլոգների 16-րդ կոնգրեսը (Հալկիդիկի, Հունաստան, 2011), Կենսաէներգիային նվիրված 1-ին Համաշխարհային կոնգրեսը (Դայյան, Չինաստան, 2011), Եվրոպական կենսաէլեկտրամագնիսական ասոցիացիայի 10-րդ կոնգրեսը (Հռոմ, Իտալիա,

2011), Հերպետոլոգների Եվրոպական 16-րդ կոնգրեսը (Լյուքսեմբուրգ, 2011), Ուղեղի ուսումնասիրման միջազգային կազմակերպության 8-րդ համաշխարհային կոնգրեսը (Ֆլորենցիա, Իտալիա, 2011), Բակտերիաֆագերին և պրոֆիտոիկներին նվիրված Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) գիտաժողովը (Թբիլիսի, Վրաստան, 2012), Ամերիկայի մանրէաբանության ընկերության Ընդհանրագիտաժողովը (Սան-Ֆրանցիսկո, ԱՄՆ, 2012), Մննդի հիմնախնդիրների 1-ին Հյուսիսային Եվրոպական կոնգրեսը (Սանկտ-Պետերբուրգ, Ռուսաստան, 2012), Հողագիտության 4-րդ միջազգային կոնգրեսը (Բարի, Իտալիա, 2012), Կենսաբժշկության համար գենոմային տեխնոլոգիաների Միջազգային գիտաժողովը (Նովոսիբիրսկ, Ռուսաստան, 2012): Գիտաժողովների գործուղումները մասամբ ֆինանսավորվում են ԵՊՀ միջոցներից, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի միջոցներից: Սակայն դրանք բավարար չեն: Համապատասխան ֆինանսական աջակցություն ֆակուլտետի դասախոսները, գիտաշխատողները և ասպիրանտները ստանում են նաև տարբեր ազգային և միջազգային հիմնադրամներից և կազմակերպություններից:

Առանձնահատուկ է նաև ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և գիտաշխատողների ներգրավումը միջազգային համատեղ նախագծերում և հետազոտական դրամաշնորհներում:

Միջազգայնացման դրսևորում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, գիտաշխատողների և ուսանողների անդամակցումը միջազգային գիտական ընկերություններին և ակադեմիաներին: Օրինակ, 2012թ. մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչը նշանակվել է Ամերիկայի մանրէաբանության ընկերության դեսպան Հայաստանում:

Ցավոք, դեռևս շատ չեն արտասահմանյան համալսարաններ երկարատև գործուղումները և դասախոսների ու ուսանողների փոխանակումները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.4.

ՄԿԾ-ի շրջանակներում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի *Կենսաբանություն* մասնագիտության բակալավրի և *Գենետիկա* մասնագիտության մագիստրոսի մակարդակում ՄԿԾ-ների շրջանակներում խիստ կարևորվում է հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմների մշակումը, ինչը համահունչ է այս ոլորտում ԵՊՀ իրականացվող քաղաքականությանը:

Այդ իսկ նպատակով ուսման երրորդ տարում առանձին ամբիոններում մասնագիտացող բակալավրի ծրագրի ուսանողների առջև դրվում են խնդիրներ՝ մշակելու համապատասխան թեմային վերաբերող գրականությունը և ծանոթանալու հետազոտությունների կատարման մեթոդներին: Ստացված գիտելիքների հիման վրա նրանք

պատրաստում են կուրսային աշխատանքներ և պաշտպանում դրանք ամբիոններում: Ուսուցման վերջին՝ չորրորդ տարում ուսանողներն անմիջականորեն մասնակցում են գիտական փորձերին կատարելով իրենց տրված հանձնարարությունները: Իրենց իսկ կողմից կատարված փորձերի արդյունքներն ուսանողները ղեկավարի օգնությամբ ձևակերպում են որպես ավարտական աշխատանք, որն սկզբում ներկայացվում և քննարկվում է ամբիոնում, ուղարկվում գրախոսության, իսկ հետո՝ ընդունվում հրապարակային պաշտպանության ԵՊՀ ռեկտորի հրամանով ստեղծված ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատմամբ: Հաշվի են առնվում թեմայի արդիականությունը և նորույթը, կատարման ինքնուրույնության աստիճանը, ձևակերպման որակը և ներկայացման որակը (առավելագույնը՝ 20 միավոր): Նույնանման մոտեցում կիրառվում է մագիստրոսի ծրագրում: Սակայն այս դեպքում ավելի մեծ տեղ է տրվում մագիստրոսական թեզի թեմայի արդիականությանը կամ նորույթին և ինքնուրույնության աստիճանին: Ցանկալի է, որպեսզի մինչև թեզի պաշտպանությունը ուսանողները ունենան հրատարակված կամ հրատարակման ներկայացրած աշխատանքներ:

Բացի դրանից, բակալավրի ծրագրի ուսանողները երրորդ կուրսից ընտրում են իրենց հետաքրքրող թեման ու ղեկավարին և զբաղվում հետազոտական գործունեությամբ: Իրենց ղեկավարների օգնությամբ ուսման երրորդ տարում նրանք յուրաքանչյուր կիսամյակի վերջում ամբիոնում ներկայացնում են հետազոտական բնույթի զեկուցումներ: Ուսման չորրորդ տարվա ընթացքում ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու ուսանողական գիտաժողովների աշխատանքներին և այստեղ ներկայացնելու իրենց հետազոտական աշխատանքի արդյունքները: Գիտաժողովի արդյունքներն ամփոփվում են ժողովածուի մեջ, իսկ առավել հետաքրքիր զեկուցումներով հանդես եկած ուսանողները պարգևատրվում են:

Նման մեխանիզմների ստեղծման նպատակն է ուսանողների շրջանում հետաքրքրություն առաջացնել արդիական, արդյունավետ հետազոտական աշխատանք կատարելու նկատմամբ, ինչը հետագայում հնարավորություն կտա իրենց ձեռք բերված գիտելիքներն ու ունակությունները կիրառել ինքնուրույն հետազոտություններում և կնպաստի նրանց մասնագիտական աճին: Գիտաժողովներին յուրաքանչյուր տարի միջինում մասնակցում է ֆակուլտետի 5-10 ուսանող:

ԵՊՀ-ում մշակված խթանող մեխանիզմներից է պրոֆեսորադասախոսական անձնակազմին տարբեր խմբերով (չափաբաժիններով) տրվող աշխատավարձի հավելավճարը, երբ հաշվի են առնվում տվյալ դասախոսի մեկ ուսումնական տարվա ընթացքում ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ հետազոտական ու ստեղծագործական գործունեության արդյունքում ունեցած ձեռքբերումները: Պարբերաբար վերամշակվում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության գնահատման ցուցանիշները՝ հաշվի առնելով նաև ՄԿԾ-ների առանձնահատկությունները:

ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրի *Գենսաբանություն* և մագիստրոսի *Գենետիկա ՄԿԾ*-ների շրջանակներում էապես բարելավվել է ամբիոններում իրականացվող հետազոտական գործունեությունը, որին նպաստում են <<Ընդհանուր կենսաբանության>> և <<Մնկերի կենսաբանության և կենսատեխնոլոգիայի>> գիտահետազոտական բազային լաբորատորիաները, տարբեր հետազոտական դրամաշնորհներ, այդ թվում՝ ասպիտանտների հետազոտությունների աջակցության ծրագիրը: Հետազոտական գործունեության և ուսումնառության փոխկապակցումն ուսանողներին հնարավորություն է տալիս ձեռք բերելու հետազոտական պատշաճ հմտություններ:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բոլոր ամբիոնները վերազինվել են նորագույն սարքերով և սարքավորումներով, ինչն էապես նպաստել է հետազոտական գործունեության զարգացմանը:
3. Հետազոտական գործունեության արդյունքները հաշվի են առնվում դասախոսների խրախուսման մեխանիզմներում, ուսանողների հետագա ուսուցումը երաշխավորելու հարցում:

ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրի *Գենսաբանություն* և մագիստրոսի *Գենետիկա ՄԿԾ*-ների շրջանակներում հետազոտական գործունեության ծավալման և ուսանողների ներգրավման ընդլայնման նպատակով հատկացվող միջոցները դեռևս բավարար չեն:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետում միջոցների սղության պատճառով քիչ են կազմակերպվում գիտական արշավներ, չեն կազմակերպվում ամառային դպրոցներ, դասընթացներ, քիչ են երկարատև գործուղումները և դասախոսների ու ուսանողների փոխանակումները:
3. Նշված ՄԿԾ-ների սովորողները լիովին ապահովված չեն հետազոտական աշխատանքային տարածքներով և սարքավորումներով, այդ թվում համակարգիչներով ինքնուրույն հետազոտություններ կատարելու համար:
4. Մագիստրոսի նշված ՄԿԾ-ում ուսանողները մինչև թեզի պաշտպանությունը քիչ են հրապարակում գիտական աշխատանքներ:

ՉԱՓԱՆԻՇ 6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.1.

ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը

Բակալավրիատի “Կենսաբանություն” մասնագիտության և մագիստրատուրայի “Գենետիկա” մասնագիտացման կրթական ծրագրերի հաջող իրականացման համար ֆակուլտետում առկա է ինչպես կենսաբան մասնագետների պատշաճ որակավորում ունեցող դասախոսական կազմ, որը նշվել է զեկույցի Չափանիշ 2ա բաժնում, այնպես էլ համապատասխան նյութատեխնիկական բազա:

Բակալավրիատի “Կենսաբանություն” մասնագիտության գծով մասնագետ պատրաստող ֆակուլտետի վեց ամբիոնները (“Բուսաբանության”, “Կենդանաբանության”, “Գենետիկայի և բջջաբանության”, “Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի”, “Մանրէաբանության և մանրէների ու բույսերի կենսատեխնոլոգիայի”, “Էկոլոգիայի և բնության պահպանության” ամբիոններ) հազեցած են ամբիոնների պրոֆիլին բնորոշ սարքավորումներով (ժամանակակից մանրադիտակներ, տարբեր տիպի ցենտրիֆուգներ, սպեկտրոֆոտոմետրեր, կշեռքներ, pH-մետրեր, էլեկտրաֆորեզի ապարատներ, լամինար բոքսեր և այլն), որոնք օգտագործվում են լաբորատոր և գործնական աշխատանքների անցկացման, ինչպես նաև կուրսային և ավարտական աշխատանքների կատարման համար: Դրան են նպաստում նաև ֆակուլտետի ևս երկու ամբիոններում (կենսաքիմիայի, կենսաֆիզիկայի ամբիոններ) առկա նյութատեխնիկական բազան, ինչպես նաև համալսարանի այլ ֆակուլտետների, հատկապես քիմիայի և ֆիզիկայի ֆակուլտետների տարբեր լաբորատորիաների հնարավորությունները, որտեղ ապագա կենսաբան-մասնագետներն անցկացնում են անօրգանական քիմիայի, օրգանական քիմիայի, անալիտիկ քիմիայի, ֆիզիկական քիմիայի և ֆիզիկայի տարբեր բաժինների դասընթացների լաբորատոր պարապմունքները: Հատկանշական է, որ հատկապես վերջին երկու տարվա ընթացքում կենսաբանության ֆակուլտետը բարելավել է սարքավորումների իր հավաքակազմը, ուսումնական գործընթացների համար ստանալով նոր սարքեր և քիմիական ռեակտիվներ:

Մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետ իրականացման գործում չափազանց կարևոր է նաև դասախոսությունների և լաբորատոր պարապմունքների ժամանակ ստացած գիտելիքների ամրապնդումը, այսպես կոչված, “դաշտային” պրակտիկաների ընթացքում, որոնք իրականացվում են Երևանից 60 կմ հեռավորության վրա գտնվող “Մարմարիկ” կրթական հանգրվանում, բակալավրիատի առաջին և երկրորդ կուրսեցիների համար:

Մագիստրատուրայի “Գենետիկա” մասնագիտացման կրթական ծրագրի իրականացման համար “Գենետիկայի և բջջաբանության” ամբիոնում նույնպես առկա է

համապատասխան ժամանակակից սարքավորումներով հագեցած նյութատեխնիկական բազա (լամինար բոքս, սպեկտրաֆոտոմետրեր, պոլիմերազային շղթայական ռեակցիայի իրականացման համակարգ իր բաղադրամասերով, ժել-էլեկտրաֆորեզի արդյունքները վերլուծող համակարգ և ծրագրային փաթեթ և այլն): Առկա ռեսուրսներն անկասկած նպաստում են ՄԿԾ-ի արդյունավետ իրականացմանը, ինչի ապացույցն են մագիստրանտ-ըջանավարտների տեսական և փորձարարական գիտելիքների պատշաճ մակարդակը, նրանց մեծ մասի կողմից արձանագրված մասնագիտական հաջողությունները: Այսպես, վերջին հինգ տարիների ընթացքում ամբիոնն ավարտել են 28 մագիստրոսներ, որոնց մեծ մասն աշխատում է իրենց մասնագիտությամբ Հայաստանի ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներում (Կենսաքիմիայի, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտներ), Վերարտադրողական առողջապահության և պերինատալոգիայի, մանկաբարձության և գենետիկայի հանրապետական կենտրոնում, ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնում և այլուր: Նրանցից 4-ը ընդունվել են ասպիրանտուրա, 2-ը աշխատում են արտասահմանյան գիտական կենտրոններում:

Այս ամենը վկայում են ֆակուլտետում և տվյալ ամբիոնում բարեբեր ուսումնագիտական միջավայրի առկայության մասին: Դրան նպաստում են գենետիկայի և բջջաբանության ամբիոնի դասախոսական անձնակազմի բարձր պրոֆեսիոնալիզմը, ամբիոնի աշխատակիցների, հատկապես ամբիոնի վարիչ պրոֆեսոր Ռ.Մ.Հարությունյանի նպատակասլաց գործունեությունը, նրանց միջազգային համագործակցությունը, պարբերաբար իրականացվող գիտակրթական բնույթի արտասահմանյան գործուղումները: Այսպես, վերջին հինգ տարիների ընթացքում ամբիոնի անդամները եղել են 16 արտասահմանյան գործուղումներում, հանդես եկել գիտական զեկույցներով, դասախոսություններով, ստացած փորձառությունն ի նպաստ դնելով ՄԿԾ-ի նպատակների արդյունավետ իրականացմանը:

ՄԿԾ-ի արդյունավետ իրականացմանն ու գիտակրթական պատշաճ միջավայրի ստեղծմանն անշուշտ նպաստում է նաև ֆակուլտետում առկա գիտահետազոտական լաբորատորիաների գործունեությունը: Այսպես, բակալավրիատի “Կենսաբանություն” մասնագիտությունն սպասարկող վեց ամբիոններում ուսանողներն իրենց փորձարարական բնույթի կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ընթացքում (իսկ մագիստրատուրայի “Գենետիկա” մասնագիտացման մագիստրանտները՝ մագիստրոսական թեզերի փորձերը կատարելիս) օգտվում են նաև ֆակուլտետում գործող “Ընդհանուր կենսաբանության” գիտահետազոտական լաբորատորիայում առկա ռեսուրսներից: Շատ դեպքերում գ/հ լաբորատորիայի հետազոտողներից ոմանք դասախոսների հետ համատեղ դեկավարում են ուսանողների ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր: Ուսանողներն, այսպիսով, հնարավորություն են ունենում օգտվել գիտաշխատողների կողմից կիրառվող արդի մեթոդական մոտեցումներից, նրանց գիտական մշակումներից ինչը, բնականաբար, դրականորեն է անդրադառնում ավարտական աշխատանքների, թեզերի գիտական մակարդակի բարձրացման վրա, նպաստում ըջանավարտների մասնագիտական կարողությունների զարգացմանը:

Բակալավրիատի “Կենսաբանություն” մասնագիտության և մագիստրատուրայի “Գենետիկա” մասնագիտացման կրթական ծրագրերի հաջող իրականացման համար

կենսաբանության ֆակուլտետում մշտապես աշխատանքներ են տարվում անհրաժեշտ ռեսուրսների բարելավման ուղղությամբ, որոնք կնպաստեն սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.2.

Ուսանողներին ծրագրի սահմաններում տրամադրվում են ուսումնառությանը նպաստող օգտակար և մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն:

Թե՛ բակալավրի, թե՛ մագիստրոսի կրթական աստիճաններում սովորող ուսանողներին պարտադիր եղանակով տրամադրվում է տեղեկատվություն ինչպես կրթական ծրագրերի կառուցվածքի և բովանդակության, այնպես էլ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսանողների պարտավարությունների և իրավունքների վերաբերյալ:

Ուսանողները տեղեկատվությունն ստանում են երեք հիմնական ճանապարհներով՝ «Ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» ձեռնարկից, որն ունի նաև էլեկտրոնային տարբերակ, վեբ կայքում գետեղված նյութերից, ինչպես նաև բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի խորհրդատուներից և ղեկավարներից:

Բացի «Ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» ձեռնարկից, սկսած 2013/14 ուս. տարուց, «Կենսաբանություն» բակալավրի և «Գենետիկա» մագիստրոսի ծրագրերի բոլոր ուսանողներին հասանելի կլինեն նաև ծրագրերի մասնագրերը, որտեղ հստակ ներկայացված կլինեն ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների նպատակը (պրոֆիլը), կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման համար կիրառվող մեթոդները և ուսումնական պլանի քարտեզը:

Պետք է նշել, որ չնայած տեղեկատվության տարածման բոլոր արդյունավետ միջոցների առկայությանը, ուսանողները և, մասնավորապես, բակալավրի կրթական ծրագրի ուսանողները, լիարժեքորեն իրազեկված չեն լինում կրթական ծրագրերի ակադեմիական պահանջներին, կրթական գործընթացի կազմակերպման առանձնահատկություններին և այլն: Սա, առաջին հերթին, պայմանավորված է ուսանողների մոտ համապատասխան մոտիվացման բացակայությամբ, ինչպես նաև արդի առցանց ռեսուրսներից օգտվելու կարողությունների բացակայությամբ:

Կենսաբանության ֆակուլտետի ղեկնատը նույնպես ակտիվ աշխատում է ուսանողների հետ՝ տրամադրելով և պարբերաբար հիշեցնելով քննությունների և լուծարքների ժամանակացույցը, դրանց անցկացման վայրը և այլն:

Ցավոք, կենսաբանության ֆակուլտետի վերը նշված երկու կրթական ծրագրերի դասախոսները ուսանողներին համապատասխան տեղեկատվության տրամադրման համար հազվադեպ են կիրառում ժամանակակից ուսուցման առցանց տարբերակներ: Դա պայմանավորված է, հիմնականում, դասախոսների որոշ մասի մոտ համակարգչային տեխնիկայից օգտվելու բավարար կարողությունների բացակայությամբ: Այս խնդրի լուծման նպատակով ԵՊՀ պրոֆեսորդասախոսական կազմի վերապատրաստման դասընթացներում

նախատեսված են նաև համակարգչային դասընթացներ, որոնք կնպաստեն դասախոսների մոտ համապատասխան հմտությունների զագացմանը և կխթանեն նաև օնլայն եղանակով տեղեկատվության հոսքին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.3.

ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով

Բակալավրիատի “Կենսաբանություն” մասնագիտության և մագիստրատուրայի “Գենետիկա” մասնագիտացման կրթական ծրագրերի հաջող իրականացման համար ֆակուլտետում առկա է անհրաժեշտ ուսումնամեթոդական բազա: Բակալավրիատի “Կենսաբանություն” մասնագիտության բակալավրի և “Գենետիկա” մասնագիտացման մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրերը մշակվում են պետական կրթական չափորոշի պահանջներին համապատասխան և ներառում են ուսումնական պլանները, ուսումնական դասընթացների և պրակտիկաների առարկայական ծրագրերը: Վերջիններս ըստ բովանդակության համապատասխանում են հիմնական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների լրիվ ցանկին, նույն դասընթացների բաղադրիչներին (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ, կուրսային և ավարտական աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների ծրագրեր): Ցավոք, որոշ դեպքերում դասավանդվող նյութը լիովին չի ընդգրկում առարկայական ծրագրերով սահմանված բովանդակությունը: Դա կանխելու նպատակով պարբերաբար կազմակերպվում են դասալսումներ ամբիոնների վարիչների և պրոֆեսորների կողմից, դասախոսներին պարտավորեցնում են ժամանակը չբավարարելու դեպքում որոշ ծրագրային հարցեր ուսանողներին հանձնարարել ինքնուրույն աշխատանքների համար, ապահովելով նրանց անհրաժեշտ մեթոդական ցուցումներով:

“Կենսաբանություն” մասնագիտության բակալավրի և “Գենետիկա” մասնագիտացման մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրերը ապահովված են մեթոդական ձեռնարկներով և ցուցումներով, ինչպես նաև տեսալսողական, բազմամիջավայրային նյութերով և ցուցադրական ձեռնարկներով:

Ուսուցման ընթացքում “Կենսաբանություն” մասնագիտության բակալավրի առանձին մասնագիտական դասընթացների և “Գենետիկա” մասնագիտացման գծով գործնական ունակությունների, ապագա աշխատավայրում հմտություններ և փորձառություններ ձեռք բերելու նպատակով բնագավառի կազմակերպարավական տարբեր ձևերի կազմակերպություններում, հիմնարկներում և հաստատություններում կազմակերպվում են ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաներ:

Կենսաբանության ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվում են ուսումնական պլանները, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը: Ուսումնական պլաններում և ծրագրերում կատարվում են փոփոխություններ, որոնք միտված են ուսուցման պրոցեսի որակի բարձրացմանը: Առանձնապես ուշադրություն է դարձվում ուսումնական պլաններում դասընթացների տրամաբանական

հաջորդականությանը, կենսաբանական գիտությունների զարգացման արդի վիճակին դրանց համապատասխանեցմանը, ծրագրերում նորագույն գրականության տվյալների ներառմանը: Կարևորվում է նաև ուսանողների ծանրաբեռնվածության օպտիմալ բաշխումը՝ լսարանային և ինքնուրույն աշխատանքի համար տրամադրվող ժամանակի հատկացմանը: Վերջին տարիների ընթացքում ռեկտորատի պահանջով կրճատվել է “Կենսաբանություն” մասնագիտության ուսումնական պլանում ընգրկված առարկաների /մոդուլների/ թվաքանակը:

“Կենսաբանություն” մասնագիտության բակալավրի և “Գենետիկա” մասնագիտացման մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը ներառում է ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործնական (սեմինար) աշխատանքների կատարում՝ ներառյալ որպես պարտադիր բաղադրիչ՝ համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ գործնական առաջադրանքների կատարումը: Պարտադիր պահանջ է նաև անհրաժեշտ ինֆորմացիոն բազայի ստեղծումը, որն ապահովում է բարձրորակ մասնագետի պատրաստումը: Այդ պահանջին համապատասխան ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը մեծ աշխատանք է կատարում. կազմվում են մայրենի լեզվով դասագրքեր, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ, որոնց հրատարակման համար ԵՊՀ ղեկավարությունը տրամադրում է անհրաժեշտ գումարներ:

Դրանք զգալի չափով լրացնում են “Կենսաբանություն” մասնագիտության և “Գենետիկա” մասնագիտացման ուսումնական պլաններով նախատեսված ուսումնամեթոդական գրականությունը, որը առկա է բուհի գրադարանում: Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումն ապահովվում է յուրաքանչյուր ուսանողի մուտքով դեպի գրադարանային ֆոնդեր և տվյալների բազաներ: Գրադարանը ապահովում է նաև ուսանողների կողմից այլ երկրների գրադարաններում գտնվող գրականության օգտագործումը միջգրադարանային համացանցային կապերի միջոցով:

ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

1. Կենսաբանության ֆակուլտետում գործում են անհրաժեշտ ակադեմիական տեղեկատվության տրամադրման հիմնական եղանակները: Բոլոր ուսանողներին հասանելի են «Ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը», վեր կայքում գետեղված նյութերը, ինչպես նաև բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի, խորհրդատուների և ղեկավարների աշխատանքը ուսանողների հետ:
2. Շնորհիվ ռեկտորատի վարած քաղաքականության զգալիորեն ակտիվացել է մայրենի լեզվով ուսումնական, հատկապես ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը, որը զգալիորեն նպաստում է սովորողների գիտելիքների հարստացմանը և դասավանդման որակի բարձրացմանը:

ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

1. Կենսաբանության ֆակուլտետի կրթական ծրագրերի շրջանակներում դասախոսները ուսանողներին համապատասխան տեղեկատվության տրամադրման համար հազվադեպ են կիրառում ժամանակակից ուսուցման առցանց տարբերակները: Այս խնդրի լուծման նպատակով ԵՊՀ պրոֆեսորդասախոսական կազմի վերապատրաստման դասընթացներում նախատեսված են նաև համակարգչային դասընթացներ, որոնք կնպաստեն դասախոսների մոտ համապատասխան հմտությունների զագացմանը և կխթանեն նաև օնլայն եղանակով տեղեկատվության հոսքին:
2. Միշտ չէ, որ ամբիոնների վարիչները բավարար են չափով վերահսկում առարկայական ծրագրերում ընդգրկված նյութի դասախոսների կողմից լիարժեք մատուցումը ուսանողներին:

ՉԱՓԱՆԻՇ 7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՄԿԾ-ի շրջանակում առկա է որակի ապահովման ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և շարունակական զարգացումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.1.

Որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակության կարիքներին ու ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի *Կենսաբանություն* և մագիստրատուրայի *Գենետիկա* մասնագիտական կրթական ծրագրերի որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման հիմքում ընկած են ԵՊՀ-ում ընթացող կրթական գործընթացների շարունակական բարելավման 2010–2014 թթ. զարգացման ծրագրերի շրջանակում մշակված որակի ապահովման ռազմավարությունը, որակի ապահովման հայեցակարգը և մի շարք ընթացակարգեր, որոնք ունեն պաշտոնական կարգավիճակ:

ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի որակի ներքին ապահովման ամբողջական համակարգի ձևավորման ժամկետները համապատասխանում են ԵՊՀ-ի որակի ապահովման ժամկետներին, որոնք համաձայն Համաշխարհային բանկի՝ «ԵՊՀ ՈՆԱ համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» դրամաշնորհային նախագծի ժամանակացույցի, նախատեսված է ավարտել 2013 թ. վերջին:

ԵՊՀ որակի ապահովման ռազմավարությունը սահմանված է «ԵՊՀ 2010-2014 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում» (Նպատակ I. Բարձրորակ կրթություն, Խնդիր I.բ): Ըստ այդ ծրագրի որակի ներքին հավաստման համակարգը ձևավորվում է Եվրոպական չափորոշիչներին համապատասխան:

Այժմ այն ձևավորման ընթացքում է և համապատասխանելով ԵՊՀ-ի ՈՆԱ համակարգին բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

1. կրթական ծրագրերի որակի ապահովում,
2. դասախոսական կազմի որակի ապահովում,
3. կրթական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների որակի ապահովում,
4. ուսանողների գնահատման թափանցիկ համակարգ,
5. ներքին տեղեկատվական համակարգեր,
6. հանրային տեղեկատվություն:

Կենսաբանության ֆակուլտետում ՈՆԱ համակարգի վերջնական կայացման համար ԵՊՀ-ն ֆակուլտետին տրամադրում է անհրաժեշտ ռեսուրսները՝ ձևավորելով որակի ներքին ապահովման գործառույթներ իրականացնող համապատասխան կառույցներ:

ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի *Կենսաբանություն* և մագիստրատուրայի *Գենետիկա* մասնագիտական կրթական ծրագրերի /ՄԿԾ/ որակն

ապահովվում է հետևյալ սկզբունքներով՝

- Ֆակուլտետի կրթական ծրագրերն ունեն հստակ սահմանված և հրապարակված նպատակ, ակնկալվող կրթական վերջնարդյունքներ և ընտրված դասավանդման, ուսումնառության ու գնահատման մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողների կողմից այդ վերջնարդյունքների ձեռքբերմանը:

- Ֆակուլտետի կրթական ծրագրերի որակի ապահովումը հիմնվում է դրանց մշակման, հաստատման գործընթացների և ուսանողների ու շրջանավարտների հետադարձ կապի մեխանիզմների վրա:

Հարկ է նշել, որ ուսանողները դեռևս ներգրավված չեն կենսաբանության ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացներում: Դա պայմանավորված է նրանով, որ վերը նշված ընթացակարգերը դեռևս կենսաբանության ֆակուլտետի որակի ապահովման գործընթացներում ներառված չեն (տե՛ս սույն ինքնավերլուծության զեկույցի չափորոշիչ 7.2):

ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետում ակտիվորեն գործում են մի շարք ուսանողական կառույցներ, մասնավորապես՝ ուսանողական խորհուրդը, ուսանողական գիտական ընկերությունը: Ֆակուլտետը նաև ակտիվորեն համագործակցում է ԵՊՀ-ի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի և համալսարանում գործող այլ նմանատիպ մարմինների հետ:

Ֆակուլտետում գործում է ուսումնական խորհրդատուների (կուրատորների) համակարգը, որը, սակայն, դեռևս այնքան էլ զարգացած չէ: Գենետիկայի և բջջաբանության ամբիոնում մագիստրատուրայի *Գենետիկա* մասնագիտական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողներն ակտիվորեն մասնակցում են ուսանողական գիտական ընկերության աշխատանքներին, պարբերաբար տպագրում պատի թերթեր՝ գիտության նորությունների վերաբերյալ, մասնակցում են գենետիկայի նորություններին նվիրված կինոփառատոնին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.2.

ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր):

ԵՊՀ-ի Կենսաբանության ֆակուլտետում մշակվել են որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, համաձայն ԵՊՀ ՈՆԱ ռազմավարության, որը ենթադրում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան կադրային-ռեսուրսային ապահովվածության գնահատման, ուսումնական ծրագրերի արտոնման, մշակման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման համար ներքին չափանիշների և ընթացակարգերի ստեղծում:

Այս գործընթացի շրջանակներում մշակվել և հրապարակվել են նաև ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ գնահատման, վերանայման և բողոքարկման մեխանիզմները:

Նաև մշակվել են որակի չափանիշներ, կանոնակարգեր և ընթացակարգեր և իրականացվում է դրանց հրապարակայնության ու հետևողական կիրառման ապահովում:

ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի ՈՆԱ քաղաքականության նպատակներն են. կրթական չափորոշիչների, կրթական ծրագրերի որակը և շարունակական բարելավման ապահովումը:

Կենսաբանության ֆակուլտետում դեռևս բավարար չափով չեն կիրառվում ԵՊՀ-ի որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված ՈԱ ընթացակարգերն ու մեխանիզմները: Մասնավորապես՝

1. Բակալավրիատի *Կենսաբանություն* և մագիստրատուրայի *Գենետիկա* մասնագիտական կրթական ծրագրերի արտոնումը, ներքին փորձաքննությունն ու հաստատումը,
2. Բակալավրիատի *Կենսաբանություն* և մագիստրատուրայի *Գենետիկա* մասնագիտական կրթական ծրագրերի տարեկան մոնիթորինգը և պարբերական վերանայումը,
3. Կենսաբանության ֆակուլտետի դասախոսների որակավորման բարձրացման կրեդիտային հենքով ուսումնագիտական ծրագրի կատարումը,
4. Դասավանդման արդյունավետության վերաբերյալ Կենսաբանության ֆակուլտետի ուսանողական հարցումները,
5. Ֆակուլտետի շրջանավարտների բավարարվածության հարցումները:

Վերը նշված ընթացակարգերը նախատեսվում է ներդնել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացներում սկսած 2013/2014 ուսումնական տարուց:

Ըստ «ԵՊՀ ՈՆԱ համակարգի զարգացում և ինքնագնահատման գործընթացի ներմուծում» դրամաշնորհային նախագծի ժամանակացույցի, տեղի է ունենում բակալավրիատի *Կենսաբանություն* և մագիստրատուրայի *Գենետիկա* մասնագիտական կրթական ծրագրերի հաստատման, մոնիթորինգի և վերանայման ընթացակարգերի լրամշակում, որը կավարտվի մինչև 31.03.2013-ը և որի արդյունքում նախատեսվում է այդ գործընթացներում ուսանողների և այլ շահեկիցների մասնակցության ընդլայնում (տես նշված ժամանակացույցը, կետ 2.4):

ՉԱՓՈՂՈՇԻՉ 7.3.

ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացներ իրարելավման համար:

ՉԱՓՈՂՈՇԻՉ 7.4.

ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահեկիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում:

ՉԱՓՈՂՈՇԻՉ 7.5.

ՄԿԾ-ի շրջանակներում իրականացվում է օրինակելի փորձի տարածում:

ԵՊՀ-ում գործող, որակ իապահովմանն ուղղված բոլոր ընթացակարգերը կենսաբանության ֆակուլտետում կրթական գործընթացի կազմակերպման հիմքն են հանդիսանում (տե՛ս ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշ 10-ը):

Կենսաբանություն բակալավրի և *Գենետիկա* մագիստրոսի կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացներում կարևորվում է ուսանողների, շրջանավարտների և այլ ներքին ու արտաքին շահեկիցների մասնակցությունը: Այսպես, կրթական ծրագրերի որակի անընդհատ վերահսկման և շարունակական բարելավման տարբեր փուլերում պարբերական հարցումների եղանակով տեղեկատվություն է ստացվում վերոնշյալ կրթական ծրագրերի մատուցման որակի վերաբերյալ: Այսպիսով, յուրաքանչյուր կիսամյակ ուսանողները գնահատում են կենսաբանության ֆակուլտետի կենսաբանություն բակալավրի և գենետիկա մագիստրոսի կրթական ծրագրերի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը (տես՝ ինստիտուցիոնալ ինքնավերլուծության 10.2 չափորոշիչը), հետադարձ կապի միջոցով օժանդակելով կրթական ծրագրերի վերանայման գործընթացներին:

Կենսաբանության ֆակուլտետում, համաձայն «ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգի», մեթոդական խորհրդի նիստերում, և, սկսած 2012թ. նաև ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի պարբերական նիստերում, քննարկվում են ուսանողների հարցումների արդյունքները: Քննարկումների ընթացքում հիմնական ուշադրություն նուղված է դասավանդման որակի բարելավմանը, ինչպես նաև դասախոսների մանկավարժական հմտությունների կատարելագործմանը: Մակայն ցավոք, չեն դիտարկվում կրթական ծրագրերի նպատակի, կրթական վերջնարդյունքների, ուսումնառության և դասավանդման մեթոդների, գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդների միջև կապն ու համապատասխանությունը, ինչը կարող է դիտվել որպես բացթողում: Այս առումով ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովը, ինչպես նաև մեթոդական խորհուրդը նպատակ ունեն TEMPUS ծրագրի շրջանակներում մշակված և փորձարկում անցած "Կիրառական կենսաբանություն" մագիստրոսական կրթական ծրագրի օրինակով (որը մշակվել է Եվրոպայի գործընկեր Արևմտյան Անգլիայի համալսարանի Որակի ապահովման կենտրոնի հետ համատեղ և ներառում է կրթական ծրագրերի որակի վերահսկմանն ու կատարելագործմանը նպաստող մի շարք գործիքներ) քննարկումներ կազմակերպել

Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերում և առաջիկա ժամանակներում ինքնագնահատման զեկույց ներկայացնել ԵՊՀ որակի ապահովման կենտրոն:

Կրթական մոդուլի վերաբերյալ հաշվետվությունը, որը լրացվում է դասախոսի կողմից մոդուլն ավարտելուց հետո, փաստորեն իրենից ներկայացնում է կրթական ծրագրի վերաբերյալ ինքնագնահատման զեկույց: Այն լրացվում է ծրագրի համադեկլարաների և դեկլարարի կողմից, որն էլ իր հերթին իրենից ներկայացնում է ուսանողների կրթական մոդուլների բովանդակության, դասավանդման և ուսումնառության, ինչպես նաև գնահատման վերաբերյալ բավարարվածության հարցաշար: Բոլոր այս գործիքները հարմարեցված են “կենսաբանության” և դրան հարակից ոլորտների բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում որակի ապահովման և շարունակական բարելավման համար:

Ինչպես կենսաբանության ֆակուլտետի կրթական ծրագրերի վերանայման, այնպես էլ որակի ապահովման մյուս գործընթացների վերակազմակերպման հարցում իրենց մասնակցությունն են բերում նաև վերոնշյալ բակալավրի և մագիստրատուրայի շրջանավարտները, որոնք, բուհն ավարտելիս, մասնակցում են ֆակուլտետում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցումներին: Բացի այդ, կենսաբանության ֆակուլտետում, ինչպես արդեն նշվել է սույն ինքնավերլուծական զեկույցի 1.6. չափորոշիչում, հաշվի է առնվում նաև արտաքին շահեկիցների՝ գործատուների բավարարվածությունը շրջանավարտների գիտելիքների և գործնական հմտությունների առումով: Շրջանավարտների հարցումները նույնպես քննարկվում են ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերին, ինչպես նաև, սկսած 2012թ, ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի նիստերին: Սակայն, հարկ է նշել, որ չնայած իրականացվող միջոցառումներին, վերոնշյալ կրթական ծրագրերը դեռ չունեն բավարար բովանդակային և կառուցվածքային ճկունություն, իսկ ծրագրերի դեկլարաները և պրոֆեսորադասախոսական կազմը դեռևս պատրաստ չեն անմիջականորեն արձագանքելու ուսանողների և արտաքին շահեկիցների հարցադրումներին արդյունքներին: Սակայն, “Կիրառական կենսաբանություն” մագիստրոսական կրթական պիլոտային ծրագրի և դրա շրջանակներում մշակված ֆակուլտետային մակարդակում որակի ապահովման լրացուցիչ գործիքների կիրառման օրինակելի փորձի ներդրումը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացներում էապես կբարելավի որակի ապահովման գործընթացը ֆակուլտետում:

Կենսաբանության ֆակուլտետում կրթական ծրագրերի որակի ապահովման տարբեր ասպեկտները, ներառյալ վերջիններիս հաստատման, մոնիթորինգի և վերանայման ընթացակարգերը, հանդիսանում են ֆակուլտետի ՈԱ հանձնաժողովի հիմնական գործառնությունները: Պետք է նշել, որ ՈԱ հանձնաժողովում բացի դասախոս-անդամներից ներգրված է նաև մեկուսանող, ով ներկայացնում է ուսանողների արձագանքը բարձրացվող խնդիրների շուրջ: Մեկ ուսանող ներգրավված է նաև կենսաբանության ֆակուլտետի վերոնշյալ կրթական ծրագրերի ինքնավերլուծություն կատարվող աշխատանքային խմբի կազմում և 2 ուսանող՝ ֆակուլտետի գիտխորհրդի կազմում: Մա նպաստում է նրան, որ ուսանողները, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի հետ մեկտեղ, կրթական ծրագրերի որակի վերաբերյալ իրենց կարծիքն ու առաջարկներն անելու հնարավորություն

ձեռքբերեն: Սակայն հարկ է նշել, որ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում սովորող ուսանողների միայն մոտ 10% է կրթության որակի հարցում պահանջատեր: Այս փաստը հիմնականում պայմանավորված է երկրում կենսաբանության ոլորտի մասնագիտական աշխատուժի շուկայի դեռևս չձևավորված լինելու հանգամանքով, ինչը բերում է ուսանողների մոտ կրթության մոտիվացիայի անկման, և որակյալ կրթություն ստանալու հարցում պահանջատիրության բացակայության:

Որպես արտաքին շահեկիցներ, կենսաբանության ֆակուլտետի կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացներում ներգրավված են նաև ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովների հրավիրյալ նախագահներ և անդամներ, որոնք, համաձայն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի» (հաստատված ՀՀ Կրթության և գիտության նախարարի 31.10.2011թ. N1197-Ն հրամանով), պետք է կազմեն ամփոփիչ ատեստավորման և առարկայական քննական հանձնաժողովների անդամների առնվազն 50 տոկոսը: Նշված հանձնաժողովների կազմի 50%-ի արտաքին շահեկից լինելու հանգամանքը նույնպես հնարավորություն է տալիս գործատուներից և տվյալ բնագավառի առաջատար մասնագետներից հետադարձ կապի մեխանիզմներով արձագանք ստանալ կենսաբանության ֆակուլտետում «Կենսաբանություն» բակալավրի և «Գենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրերի արդյունավետության և որակի մասին:

Կենսաբանության ֆակուլտետի վերոնշյալ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը, սկսած 2013/2014թթ., պետք է ենթարկվեն պարտադիր տարեկան մոնիթորինգի (մշտադիտարկման): Դա վերաբերում է նաև պարբերական վերանայման գործընթացներին, որոնցում ներգրավվելու են ներկայացուցիչներ մասնագիտական տարբեր ընկերակցություններից ու կազմակերպություններից, ինչպես նաև մասնագիտական ոլորտը կարգավորող մարմիններից (ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ, Երևան, 2011):

ՁԵՆՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

1. Կենսաբանության ֆակուլտետը կիրառում է ԵՊՀ-ի որակի ապահովման (ՈԱ) ընթացակարգերը, ներառյալ՝ դասավանդման որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված կիսամյակային հարցումների կազմակերպումը և վերլուծությունը, ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների իրականացումը և վերլուծությունը:
2. Կենսաբանության ֆակուլտետում առկա է որակի ներքին ապահովման լրացուցիչ գործիքների փորձարկման դրական փորձ:
3. Կենսաբանության ֆակուլտետի ուսանողներն ընգրկված են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացներում: Նրանք ընդգրկված են ֆակուլտետի խորհրդի, գիտական խորհրդի կազմում, ինչպես նաև ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովում:
4. Ֆակուլտետի որակի ապահովման գործընթացներում տարիներ շարունակ ընգրկված են եղել նաև արտաքին շահեկիցները, մասնավորապես, որպես ավարտական

ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովների հրավիրյալ նախագահները և անդամները, ինչպես նաև անմիջական գործատուները:

ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

1. Կենսաբանության ֆակուլտետում որակի ներքին ապահովման մշակույթ դեռևս չի ձևավորվել, ինչը պայմանավորված է, հիմնականում, ՈԱ գործընթացներում ոչ միայն ուսանողների, այլ նաև ներքին և արտաքին շահեկիցների ներգրավվածության դեռևս ցածր մակարդակով:
2. Ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքների քննարկումների հիման վրա կատարված կրթական ծրագրերի որակի բարելավման գործողությունների մշակումը պարբերական բնույթ չի կրում:
3. Ուսանողները կրթության որակի հարցում ոչ միշտ են պահանջատեր: Այս փաստը հիմնականում պայմանավորված է երկրում կենսաբանության ոլորտի մասնագիտական աշխատուժի շուկայի դեռևս չձևավորված լինելու հանգամանքով, ինչը ուսանողների մոտ առաջացնում է կրթության մոտիվացման անկում և որակյալ կրթություն ստանալու հարցում պահանջատիրության բացակայություն:
4. «Կենսաբանության» բակալավրի և «Գենետիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի համար կարևորագույն արտաքին շահեկիցները (նախկին շրջանավարտներ, հիմնական գործատու կազմակերպություններ և այլն) մոտիվացված ու շահագրգռված չեն համալսարանի որակի ապահովման գործընթացներին իրենց նպաստն ու մասնակցությունը ցուցաբերելու հարցում: Այս խնդիրը, ինչպես նշվել է ինստիտուցիոնալ ինքնագնահատման զեկույցի 10-րդ չափանիշում, արտաքին միջավայրում որակի ապահովման մշակույթի անբավարար մակարդակի արդյունք է:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բակալավրի Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Կենսաբանություն
2. Բուհը	Երևանի պետական համալսարան
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Կենսաբանության բակալավր, ուսուցիչ
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2012/13
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

<p>Ծրագրի նպատակները</p> <p>Ծրագիրը նպատակ ունի պատրաստել բուսաբանության և սնկաբանության, կենդանաբանության, գենետիկայի և բջջաբանության, ֆիզիոլոգիայի, էկոլոգիայի և բնության պահպանության, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառներում հիմնարար գիտելիքներով և հմտություններով օժտված մասնագետներ, որոնք ունակ կլինեն.</p> <ul style="list-style-type: none"> • գիտակցել կենսաբազմազանության դերը՝ որպես կենդանի համակարգերի և ամբողջությամբ վերցրած կենսոլորտի կայունության առաջատար գործոն, • վերլուծել կենդանի օրգանիզմների ձևաբանության, ինքնավերարտադրման, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, կենսաֆիզիկական առանձնահատկությունները • իրականացնել միջոցառումներ կենսաբազմազանության պահպանման, տնտեսական և բժշկագիտական նպատակներով դրանց ռացիոնալ օգտագործման ուղղությամբ, • կատարել հիմնարար և կիրառական բնույթի կենսաբանական գիտական հետազոտություններ լաբորատոր և դաշտային պայմաններում և ներդնել դրանց արդյունքներն արտադրության մեջ, • վերլուծել և գնահատել միջավայրի և կենդանի բնության վրա մարդածին ազդեցությունը և դրա հետևանքները, • օգտագործել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները կենսաբանության տարբեր բնագավառներում, • դասավանդել կենսաբանական առարկաներ հիմնական, ավագ, միջնակարգ դպրոցներում, նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Օրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն
 Ա1. Ծանոթ կլինի անձի ընդհանուր մշակույթին և հասարակայնացման զարգացմանը նպաստող փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության հայոց պատմության, տնտեսագիտության, իրավագիտության, քաղաքագիտության, մշակութաբանության, կրոնների պատմության հիմնահարցերին և հիմնախնդիրներին :
 Ա2. Կտիրապետի վերլուծական երկրաչափության, մաթեմատիկական անալիզի, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդներին, մաթեմատիկական մոդելավորման եղանակներին, մոլեկուլային ֆիզիկայի, թերմոդինամիկայի, էլեկտրականության և մագնիսականության, օպտիկայի, ատոմային և միջուկային ֆիզիկայի հիմնական հասկացություններին, ինֆորմացիայի հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին:
 Ա3. Կտիրապետի ընդհանուր մասնագիտական առարկաների յուրացման համար անհրաժեշտ քիմիայի տարբեր բաժինների՝ ընդհանուր, անօրգանական, վերլուծական, ֆիզիկական, օրգանական քիմիայի հիմնադրություններին:
 Ա4. Կիմանա կենդանի էակների բոլոր թագավորություններում ընդգրկված օրգանիզմների ձևաբանության, ֆիզիոլոգիայի, ինքնավերարտադրման, հիմնական տաքսոնների ներկայացուցիչների աշխարհագրական տարածվածության և էկոլոգիական առանձնահատկությունները:
 Ա5. Կունենա պատկերացում բջիջների կառուցվածքի, նյութափոխանակության, վերարտադրման և տարբերակման օրինաչափությունների, բջջային տիպերի միասնականության և բազմազանության մասին, կիմանա կենդանիների և մարդու բոլոր հյուսվածքների բջջային և միջբջջային կառուցվածքների ձևաբանական և կենսաքիմիական առանձնահատկությունները, կպատկերացնի կենդանիների և մարդու անհատական զարգացման ընթացքում

Դասավանդման/ուսումնառության մեթոդները
 Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա8 կետերում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ եղանակներով .
 Ա1.
 ▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ,
 ▪ գործնական պարապմունքներ
 ▪ մանկավարժական պրակտիկա
 Ա2, Ա3.
 ▪ դասախոսություններ
 ▪ լաբորատոր աշխատանքներ
 ▪ գործնական աշխատանքներ
 Ա4-Ա8
 ▪ դասախոսություններ
 ▪ լաբորատոր աշխատանքներ
 ▪ գործնական աշխատանքներ
 ▪ ուսումնական պրակտիկաներ
 ▪ արտադրական պրակտիկա
 ▪ նապաղիպլոմային պրակտիկա
 ▪ կուրսային աշխատանքների պաշտպանություն
Գնահատման մեթոդները
 Ուսանողների Ա1-Ա8 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով.
 Ա2-Ա8
 ▪ առաջադրանքների կատարման ստուգում,
 ▪ ստուգարքներ
 ▪ միջանկյալ քննություններ
 ▪ ամփոփիչ քննություններ
 ▪ ամփոփիչ մասնագիտական քննություն
 ▪ կուրսային աշխատանքների պաշտպանություն
 ▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն

<p>տեղի ունեցող ձևագոյացման օրինաչափությունները և դրանց իրականացման մեխանիզմները, օրգանիզմների բնական ռեզիստենտության գործոնների մասին, ադապտիվ իմունիտետի ռեակցիաներն ապահովող բջջային և մոլեկուլային մեխանիզմները:</p> <p>Ա6. Կիմանա կենդանի նյութի կազմավորվածության մոլեկուլային, բջջային, օրգանիզմային և պոպուլյացիոն մակարդակների վրա նրա հիմնարար հատկությունների՝ ժառանգականության և փոփոխականության դրսևորումների, գենի կառուցվածքի, գենետիկական վերլուծության սկզբունքների և մեթոդների, մուտագենեզի և բնական ու մարդածին գործոնների մուտագեն ազդեցության մասին, ծանոթ կլինի գենային ճարտարագիտության սկզբունքներին և կենսատեխնոլոգիայում դրանց օգտագործմանը:</p> <p>Ա7. Կհասկանա մարդու կենսագործունեության հոգեֆիզիոլոգիական և կենսաբանական հիմքերը, պատկերացում կունենա մտավոր գործունեության կենսաբանական հիմունքների, հույզերի, սթրեսի և ադապտացման, բնակության միջավայրի և առողջության պահպանման պայմանների նկատմամբ պահանջների մասին: Կիմանա ֆիզիոլոգիական պրոցեսների մոլեկուլային մեխանիզմները, նյութափոխանակության կարգավորման սկզբունքները, ֆունկցիաների կայացման համեմատական ֆիզիոլոգիական սպեկտները: Կիմանա բուսական բջջի ֆիզիոլոգիայի հիմնական գծերի, ֆոտոսինթեզի, շնչառության, ջրափոխանակության, բույսերի աճման և զարգացման, անբարենպաստ պայմանների նկատմամբ բույսերի դիմացկունության մեխանիզմների մասին:</p> <p>Ա8. Կգիտակցի կենսաբանական բազմազանության դերը՝ որպես կենդանի համակարգերի և ամբողջությամբ վերցված՝ կենսոլորտի կայունության առաջատար գործոն: Կիմանա տարբեր մակարդակների վերօրգանիզմային համակարգերի ձևավորման, գործառության սկզբունքները, պատկերացում կունենա տարբեր մակարդակների կենսաբանական համակարգերի հոմեոստազն ապահովող մեխանիզմների, օրգանիզմի և միջավայրի միջև փոխադարձ կապերն ապահովող մեխանիզմների, կեն-</p>	
---	--

<p>ստլորտում նյութերի շրջանառության և էներգիայի փոխակերպման մասին, էկոլոգիական գնահատման և էկոլոգիական կանխագուշակման ուղղությամբ մարդու գործունեության մասին:</p>	
<p>Գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1. Ծավալել գիտահետազոտական գործունեություն որպես անձնակազամի օժանդակ աշխատող, կրտսեր գիտաշխատող. իրականացնել գիտական նյութի հավաքագրում, փորձերի մասնագիտական, դաշտային հետազոտություններ, փորձարարական և դաշտային հետազոտությունների արդյունքների նախնական մշակում:</p> <p>Բ2. Կամակերպել տեղեկատվական, որողական աշխատանքներ, մեկնաբանել և քննադատորեն վերլուծել հենքային մասնագիտական տեղեկատվությունը:</p> <p>Բ3. Ծավալել գիտաարտադրական գործունեություն. իրականացնել կենսաբանական արտադրության գործընթացների տեխնոլոգիական վերահսկում, հիմնարար կենսաբանական պատրաստություն պահանջող նախագծային և արտադրական խնդիրների լուծում, ներդնել գիտական հետազոտությունների արդյունքները արտադրության մեջ:</p> <p>Բ4. Ծավալել կազմակերպչական գործունեություն բնության պահպանության և ռաջիոնալ բնօգտագործման բնագավառում, գնահատել մարդածին ազդեցության դերը շրջակա միջավայրի վրա:</p> <p>Բ5. Իրականացնել մանկավարժական գործունեություն. դասավանդել կենսաբանական առարկաներ հիմնական, ավագ, միջնակարգ դպրոցներում, նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, կազմակերպել արտադասարանային աշխատանքներ, ամառային պրակտիկաներ դպրոցականների համար:</p>	<p>Դասավանդման/ուսումնառության մեթոդները</p> <p>Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ5 կարողությունները հետևյալ եղանակներով. Բ1- Բ4</p> <ul style="list-style-type: none"> ▪ դասախոսություններ ▪ լաբորատոր աշխատանքներ ▪ գործնական աշխատանքներ ▪ ուսումնական պրակտիկաներ ▪ արտադրական պրակտիկա ▪ նապաղիպլումային պրակտիկա ▪ կուրսային աշխատանքների պաշտպանություն <p>Բ5</p> <ul style="list-style-type: none"> ▪ դասախոսություններ ▪ մանկավարժական պրակտիկա ▪ ուսումնական պրակտիկա <p>Գնահատման մեթոդները</p> <p>Ուսանողների Բ1-Բ5 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ առաջադրանքների կատարման ստուգում, ▪ ստուգաքննություններ ▪ միջանկյալ քննություններ ▪ ամփոփիչ քննություններ ▪ ամփոփիչ մասնագիտական քննություն ▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն

<p>Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</p> <p>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Գ1. Ծավալել ինքնուրույն և թիմային աշխատանք:</p> <p>Գ2. Ցուցաբերել ընկալունակություն մասնագիտական գործունեության բնագավառում նորամուծությունների նկատմամբ:</p> <p>Գ3. Պատրաստել գեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:</p> <p>Գ4. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը:</p> <p>Գ5. Կիրառել գիտելիքները արտակարգ իրավիճակներում բնակչությանը առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու համար:</p>	<p>Դասավանդման/ուսումնառության մեթոդները</p> <p>Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ5 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ դասախոսություններ ▪ լաբորատոր աշխատանքներ ▪ գործնական աշխատանքներ ▪ ուսումնական պրակտիկաներ ▪ արտադրական պրակտիկա ▪ նապաղիպլոմային պրակտիկա ▪ կուրսային աշխատանքների պաշտպանություն ▪ մանկավարժական պրակտիկա ▪ ուսումնական /դաշտային/ պրակտիկա <p>Գնահատման մեթոդները</p> <p>Ուսանողների Գ1-Գ5 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.</p> <ul style="list-style-type: none"> ▪ առաջադրանքների կատարման ստուգում, ▪ ստուգարքներ ▪ միջանկյալ քննություններ ▪ ամփոփիչ քննություններ ▪ ամփոփիչ մասնագիտական քննություն ▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն
--	---

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
<i>1-ին ուստարի /1-2 կիսամյակներ/</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
<p>Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</p> <ul style="list-style-type: none"> 1401/ B02. Հայոց լեզու և գրականություն -1 (2 կրեդիտ) 1401/ B02. Հայոց լեզու և գրականություն -2 (2 կրեդիտ) 1704/ B01. Ռուսաց լեզու -1 (4 կրեդիտ) 1106/ B01 Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ) Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) 1704/ B01. Ռուսաց լեզու -2 (4 կրեդիտ) Օտար լեզու -1 /կամ անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն/ (4 կրեդիտ) Օտար լեզու -2 /կամ անգլերեն, կամ ֆրանսերեն, կամ գերմաներեն/ (4 կրեդիտ) 1106/ B02. Հայոց պատմության հիմնահարցեր-2 (2 կրեդիտ) Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) <p>Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս</p> <ul style="list-style-type: none"> 2301/ B01. Համակարգչից օգտվելու հմտություններ (2 կրեդիտ) <p>Ընդհանուր մասնագիտական կրթամաս</p> <ul style="list-style-type: none"> 0102/B01. Մաթեմատիկա -1 (4 կրեդիտ) 0601/B01 Անօրգանական քիմիա (4 կրեդիտ) 0602/B01 Վերլուծական քիմիա (2 կրեդիտ) 0703/B01 Սնկեր և ստորակարգ բույսեր (4 կրեդիտ) 0102/B02 Մաթեմատիկա-2 (4 կրեդիտ) 0410/B01 Ֆիզիկա-1 (3 կրեդիտ) 0703/B02 Բարձրակարգ բույսեր-1 (2 կրեդիտ) 0704/B01 Անողնաշարների կենդանաբանություն (6 կրեդիտ) 0706/B01 Մարդու կազմաբանություն (3 կրեդիտ) <p>Կրթական այլ մոդուլներ Ուսումնական պրակտիկա</p> <ul style="list-style-type: none"> (3 կրեդիտ) 		60 կրեդիտի կուտակում:

Ուստարիներ և ուսումնական մոդուլներ		
<i>2-րդ ուստարի /3-4 կիսամյակներ/</i>		
ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
<p>Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</p> <ul style="list-style-type: none"> Լրացուցիչ լեզվական դասընթաց /Ռուսաց լեզու 3 կամ օտար լեզու 3/ (4 կրեդիտ) 1301/ B01.Փիլիսոփայության հիմունքներ(4 կրեդիտ) Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ) 	<p>Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</p> <ul style="list-style-type: none"> 1001/ B01.Տնտեսագիտություն (2 կրեդիտ) 1202/ B01 Քաղաքագիտություն (2 կրեդիտ) 	60 կրեդիտի կուտակում:

